


Университетские
Книжки Библиотечные
1911

891.99

U-91



ՃՈՒՇԱՆ
ՃԱԻԱՐՃԱՆԱՅ

ԾՐԱԳՐԵԱՑ

Գ. Վ. ՍՐՈՒՍՆՉՏԵԱՆՅ



ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ՓԻՇԹՕՖՃԵԱՆ ԵՂԲԱՐՑ

«ԱՐԱՄԱԶԳ» ԳՐԱՏԱՆ



391.99

4-91

ՇՈՒՇԱՆ
ՇԱԻԱՐՇԱՆԱՅ

ՇՐԱԳՐԱՆ

Գ. Վ. ՍՐՈՒՍԵՆՉՏԵԱՆՅ



ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՒՆԸ

ՓԻՇԹՕՑՃԵԱՆ ԵՂԲԱՐՑ

«ԱՐԱՄԱՋԴ» ԳՐԱՏԱՆ




ՏՊԱՐԱՆ * * * * *
ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ
ՂԱԼԱԹԻՍ - Կ. ՊՈԼԻՍ * * * * *

1911

05.08.2013

56.161

ՅԱՅՍԵՅՈՒԿԱՅ



ՄԱՀԱՐՁԱՆ
ՍԷՐՎԷՐԵԱՆՑ
ԲԱՂԴԻԿԻՆ



3029-48

ՀԱՅՐ ՆԱՀԱՊԵՏ ՅԱԿՈՐ

ՄԱՅՐ ԱՆՈՅՇ ՏԻԿԻՆ

ԵՂՔԱՐԻ ՀԻՆԳ ՊԱՏՈՒԱԿԱՆԻ ԵՒ ԱԶՆԻԻՔ

ԳՈՐԻ ԶՈՐԻ ԱՌԱՔԻՆԻՔ

ՔԵՆՈՐԻՆԵԱԿԻ ՇՆՈՐՀԱԼԻՔ

ԵՒ

ՆՈՐԱՐՈՂԲՈՋՆ Ի ՆՈՍԻՆ

ՔՐՔՄԱՇԱՂԻԿՆ ՄԱՋԵՐՈՎ

ՄԱՏԱՂԱՏԻՆ ՅՈՒԼԻՔԱՆԷ

ՎԱՆԱՏՈՒՔ ՀԻՐՐԵՆԿԱԼՈՒՔ

Ա. ՀԱՅՐԻԿԻՆ

ԵՒ ԱՆՈՐ ՀՈԳԵՒՈՐ ԵՐԿԱՆՑ

ՉԱՒԱԿԻՆ

ԻՆՉ

ՄԵՐ ՊԱՆԳԻՏՈՒԹԵԱՆ ՕՐԵՐՈՒՆ

ԲԱՂԴԻԿՆ կրտսեր էր յեղբարն . պատանի վեշտասանամեայ . նոր կը մրային անոր թուխ յճափրուն հետ թել թել մօրուաց երեսաց , ծիլ ծիլ ընչացք ունեաց :

Շնորհայի էր . պարկեշտ . փարելի ամենից : Հաւասար իւր հօր կը յարգէր զՍ . Հայրիկն . հաւասար եղբարց կը սիրէր նա զիս :

Ընտանի խանդաղատանաց և զգուշանաց գորովով մնած . փափուկ էր . քնքոյշ և հրեշտակի պէս անմեղ իւր զգալիքով և հոգւով :

Նա զիս սիրեց Յովնադանու սիրով , և ես անոր Դաւիթն եղայ . անոր մահը ողբացի :

Աչքովս անոր հոգեվարքը տեսայ իրրև 'ի Քեղրուայ լերանց վերայ ինկած վիրաւոր , ինկած հիւանդագին ինկած մահացեալ . . .

«—Ո՛հ , ցաւ է ինձ 'ի վերայ քո , եղբայր իմ Բաղդիկ—» :

Վերջին խօսընկերն ես եղայ անոր . . . Երբ կ'արտասուէին զինքն ծնօղք . քորք և եղբարք ի գուճ եկեալ զմահճօքն , և ալ չբարբառեցաւ նա . . . :

«Կիրակի եկեղեցին պիտի գամ» ասաց ինձ . օրը չարաթ էր . և երկուշարթին ընդ առաւօտն դագաղով բարձաւ , յեկեղեցին մուծաւ :

Սմբողջ Գուգիունճուղն լացաւ զնա . կակմնաբարձ կը հառաչէինք ամենեքեանքս . Այնքան չնորհայի , այնքան սիրելի էր նա :

Կը փղձկիմ տակաւին , երբ զինքը կը յիշեմ . և միշտ կը փղձկիմ , քանզի միշտ կը յիշեմ :

Աղէկտուր հեծեծանօք աղօթեցինք վրան , մորմոքելով հեկեկացինք անոր հոգեհանգիստը , և

արտասուօք աւանդեցինք մարմինն 'ի հող տա-
պանին, հողեակն Հոգւոյն Աստուծոյ:

Անոր տխուր շիրիմը կնքելէն 'ի վեր՝ ըննիցս
բոլորեցաւ Լուսնակն. բայց չեղաւ ինն վայրկեան,
որ չ'իջէի զնա. հառաչէի անոր յիշատակին հա-
մար:

Կսկիծը մաշեցոյց անոր տառասարակիր մօր տի-
կին Անուշեկին ծնելական գորովով խորովեալ
սրտիկը. տրորեց ծերունի հօր իննամոտ աղիքը.
Թարչամեցոյց քուերց և եղբարց խանդագին վար-
դագոյն զուարթ ականողիքը. տակաւին կը սգան
կ'ողբան իրենց տարարազդիկն Բաղդիկ:

Իբրեւ 'ի սփոփանա մխիթարար Ձեր վշտաց,
իբրեւ զուզնաքեաց փոխարինի նշան Ձեր առ իս
անկչիս սիրոյ երախտեաց, ո՛ր տուն Սէրվէրեանց,
ՇՈՒՇԱՆՍ կ'ընծայեմ ԲԱՂԴԻԿԻՆ յիշատակին:

Հայրենեաց առաքինեաց մահարձա՛աց 'ի վերայ
անոր առաքինի անունն ալ զրոշմուած անեղծ
թող մնայ:

Մասխի կողերէն տապանաքար մի,
Շաւարչանայ հովիտէն Շուշան մի,
Երասխի եզերքէն ուռննուոյ ոստ մի,
Արմաւրի սօսիներէն սաղարթ մի,
Եփրատի ափերէն աւազներ,
Տղմուտէն տղմոտ հողերը.

Վարագայ սարի Անթառամ ծաղիկներէն փունջ
մի, քաղած՝ մատերովս, բարձած՝ թեւերովս ցօղած՝
աչերովս, կը բերեմ շինել զարդարել Բաղդիկին
գերեզմանը:

Ի ՄԱՀ ՆՈՐԻՆ

Ծերունւոյն աղիք խածանին.
Ծնողին աղիք գալարին.
Խորչակն հարաւ 'ի ծաղիկդ.
Թարչամեցար, ո՛հ, ԲԱՂԴԻԿ:

Աչնան օդ չընչեաց ժանտածուտ.
Յայգ այգուն շուշանդ խամրեցար.
Շնորհաց կոկոն նորափթիթ,
Թօթափեցար, ա՛հ, ԲԱՂԴԻԿ:

Յովսէփայ տիպար պատանի.
Պատմուճանդ ծաղկեայ շնորհօք լի.
Սիրոյ զաւակ տան հօր քոյ,
'ի հող իջեր, ո՛հ ԲԱՂԴԻԿ:

Կայտոէիր զերթ ձագ եզնիկի,
Ժըպտէիր զուարթ երեսօք,
Քորք և եղբարք, բարեկամք,
Քեւ բերկրէին, ո՛հ, ԲԱՂԴԻԿ:

Ո՞ր զքէն գոյժ տարցէ Յակորայ,
Յակորայ հօր քո նահապետ.
Ո՞ր ժուժեցցէ զքեզ յիշել,
Եւ չկողկողել՝ վա՛հ ԲԱՂԴԻԿ:

Արուսեակ քան զքեզ չէր պայծառ.
Շողջողուն էր յոյս քոյդ կենաց,
Անկաւ արեւդ, չեւ ծագեալ.
Մահն ըստուեր ած զքեւ ԲԱՂԴԻԿ:

Փոխանակ աւուրց երջանիկ .
Զոր յուսայր մայր քո Անուշիկ .
Սուգ եւ թախիծ ճաշակէ ,
Զանձն եւ ըզքեզ լայ , ԲԱՂԴԻԿ :

Որ երկնեացն 'ի ցաւս յարգանդին .
Որ բերկրէրն երբ դու ժպտէիր .
Մահ քո գմայր քո թաղկառոյց ,
Մնչէ , չնչէ , Ա՛՛՛ն , վա՛՛՛ն , ԲԱՂԴԻԿ :

Սիրոն այրի այրուցն է վթիկին ,
Նոյնմղարն այրեալն նոր այրի .
Կիզնուն Կոյնն եւ միւսն Հոխիսխմէն ,
Ի սէր քո եւ մահ , վա՛՛՛ն ԲԱՂԴԻԿ :

Զի՛ տըքնիս անքուն աչերով ,
Այտուցեալ կոպերդ յարտասուս .
Եղբայրասէրդ Կարապետ ,
Ո՛ւր է եղբայրդ , ո՛ւր ԲԱՂԴԻԿ :

Դողդոջիւն օտիւք եւ 'ի շունչ ,
Գաս այցել ցաւոյ սիրելւոյդ .
Փղձկիս , սարսոխս , Մկրտիչ .
Ոչ եւս չնչէ քոյդ ԲԱՂԴԻԿ :

Նըչանիդ սրտին լար , կիթառ ,
Անչըչունչ կախին աղէբեկ .
Զի թեկ կենաց , ո՛՛՛ն , հատաւ
Եղբորդ . . . ոչ եւս է ԲԱՂԴԻԿ :

Որ նստիսդ . Գէւորդ , անընթաց .
Բարձր հողւովդ թեւես յամէն ուր .
Պակասեցաւ , ո՛՛՛ն , 'ի քէն ,
Կամակատարն քոյդ ԲԱՂԴԻԿ :

Լրուցո՛ գարբնդ , Գրիգորէ .
Գոյժ չնչէ զանգակ տաճարին .
Սըփեալ զերեսս աիերովդ ,
Տիրան , լացէք ըզԲԱՂԴԻԿ :

Այլ հերիք , թողէք զարտասուս ,
Նա գընաց յերկնս առ Յիսուս .
Յերանկիան եղև երջանիկ ,
Անմահացաւ , մեռեալ չէ ԲԱՂԴԻԿ :

Սրուանձեանց
Գ. Վ.

1875 Մայիս 1, Կ. ՊՕԼԻՍ



Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

«Այս են Հայոց խոստովանողք... 'Ի սմա տեսցեն
«զքաջ նահատակն, որ կատարեցան սրով: 'Ի սմա
«տեսցեն և զսուրբ կապանս չարչարանացն»):

«Եւ յորժամ մարտիրոսք և խոստովանողք և կապ-
«եալք սովաւ տեսանին, սովաւ օրհնի աշխարհն ամե-
«նայն»):

«Սովաւ օրհնին և տղայք նոցա յաճումն»):

«Սովաւ զգաստանան երիտասարդք նոցա 'ի սրբու-
«թիւն»):

«Սովաւ համեստանան ծերք նոցա յիմաստութիւն»):

«Սովաւ ուսանին իշխանք նոցա զմարդասիրութիւն»):

«Սովաւ անկանի դուժ յԱստուծոյ 'ի սիրտ թագաւո-
«րին՝ շինել և խաղաղութիւն առնել բոլոր աշխարհին»):

«Սովաւ եկեղեցիքն պարծին իրրեւ քաջ և կատարեալ
«զինուոր»):

«Սովաւ վկայարանքն զարդարին»):

«Սովաւ և վկայքն ցնծացեալ բերկրին»):

«Սովաւ և զաշտն Ա.Ի.Ս.Բ.Ս.Յ.Բ.Ի՛ պայծառացեալ ծաղ-
«կալից լինի. ոչ յանձրեալքն ամպոց, այլ 'ի սուրբ
«և յարիւնաբուղիս վկայից ցանեալ և ցրուեալ սպիտա-
«կութիւնք սուրբ ոսկերաց...»):

Սովաւ յիշեսցեն զհոգեւոր զունդս պատերազմողացն,
«որ փոխանակ մեր ետու զանձինս 'ի մահ, և հեղին
«զարիւնս իւրեանց 'ի հաշտութիւն պատարագ Աստու-
«ծոյ»):

«Սովաւ յիշին սուրբ քահանայքն որք խողխողեցան
«յօտարութեան, և ցածուցին զսրտմտութիւն բարկու-
«թեան թագաւորին»):

«Սովաւ թերեւս զի զմեր կապանս յիշեսցեն, և ա-
«ղօթս առնելով խնդրեսցեն յԱստուծոյ, զի գերեզարձ
«լիցի մեզ անդրէն 'ի հայրենի երկիրն մեր...»):

ԵՂԻՇԷ

Վասն խոստովանողացն Հայոց

Թող պարծի Հայն իւր Հայութեամբ. և ա՛ա՛ իւր
պարծանք:

Սքանչելեօք և զմալմամբ կը ընու մարդու հոգին,
արտասանելով այս տողերը, այս բառերը, այս տառերը
որ հրեղէն են, հոգեղէն են:

Ո՛յր վերայ պէտքէ հիանալ:

Եղիշէին, որ զայն գրեր է.

Կապելոց, որ զայն զգացեր են.

Թէ առ հասարակ հինգերորդ դարու Հայոց, որ զայս
ամենայն կրեր են:

Ո՛վ Հայք, անզուգական եմք մեք յազգս: Իրաւ,
անհնարին չարիք և աւերք հասած են մեզ. բայց և այդ
փորձանաց մէջ այնպիսի դիւցազներ, այնպիսի առաքի-
նիներ 'ի հանդէս եկած են, որոց անմահ անունները ան-
մահ պահած են Հայ անուն և Հայաստանը:

Խոցեալ նետիւք. վիրաւորեալ սրով ողջ անձը արիւ-
նազանդ է մեր եկեղեցւոյն, մեր ազգին. մեր փառքն
եղած են չղթայք, զիակունք, գերեզմանք. դոքա եղած
են և մեր կենաց պատճառք:

Հինգերորդ դարը Հայոց ազգի վերածնութեան դարն
է. ծանր երկունք կրեց մեր Մայր Հայաստանը, մեր
մայր եկեղեցին՝ այդ օրերը, և առ ցաւս իւր սաստկա-
գինս ճչեց. բայց և այնպիսի զաւակներ յարոյց, որոց
մէն մի հոգին կ'արժէ մէն մի ազգ ամբողջ, ազգ ընտիր,
ազգ պատուական և ազնիւ:

Ո՛վ էր Վարդան, Հայ մը՝ Պարսկին սպարապետ,
Ղեւոնդ՝ գեղի մը տէրտէր, Գարեգին՝ մանուկ տղայ մը,
Սրբահամ՝ ճգնաւոր մը. Նախարարք՝ կապեալք. Տիկ-
նայք՝ տկար կանայք. Բահանայք՝ պաշտօնատարք,
Ժողովուրդք՝ օտարին հպատակք, քաղաքականք և
գեղջկա՛նք առ հասարակ. բայց միարան առաքիւնիք,
հաւասարք մեծ, հաւասար արիացեալք, հաւասար ան-
մահացեալք:

եղիչէի պատմագիրքն է Հայոց համար այն մատ-
 եանը, որ յետ Աւետարանին է նոր Աւետարան. ի նա
 Հայ Քրիստոնեաները Քրիստոսանման կը տեսնենք: Անդ
 Գեթեմանի պարտէզն է Աւարայրը. Ձիթենեաց լուր՝
 Մասիս և Հայրենի սարերը. Աղօթք. Տագնապ. Քր-
 տունք՝ ամէն վայրերը. Զօրացուցիչ Հրեշտակ և Մահ-
 ուան Բաժակը՝ միշտ առնթեր և առ ձեռն: Աշակերտք
 սիրեցեալք, և Մասնիչ Սկարիտիտացիք՝ Սիւնեցիք:
 Հայոց բոլոր բլուրները և փոսերը Գողգոթայ են և Գե-
 րեզման, ուր կը կախուին կը կոխուին քաջարար հեղա-
 բար արդարները անմեղները, զնելով իրենց կեանքը
 Աստուծոյ համար, բարեկամաց և եղբարց վրայ, թող-
 լով սիրելիները, տուները, գանձերը և անձերը, ինչք
 բառնալու, և ինչին ու ինչեցելոյն սիրոյն զո՞ լինելու
 համար, որոց ձայնը բարձրարարատ կը քարոզէ մեզ ի
 քաջալերս՝ թէ «Մե՛ք ՅԱՂԹԵՑԻՆԻ՛ք»:

Հրաչայի՛ է արդարեւ մեռնելով յաղթել. ինչպիսի
 քաջալերել. մահու անմահանալ. զո՞նեկով փրկել:

Ընթեռնուն թող Հայոց ձերերը այդ մատեանը. և
 պիտի նորոգուի անոնց արեւը. ընթեռնուն թող ծնողք,
 և ուսանին դաստիարակել իրենց զաւակունքը այն հոգ-
 ւով, զոր կը ներշնչէ այդ սուրբ գիրքը: Ուսանին և ի
 գործ զնեն իրենց ծնողական ընտանեկան մեծ պարտա-
 ւորութիւնը, ճանչնալով թէ՛ եկեղեցւոյ շինութեան
 քարինքը, հայրենեաց արմատը, ազգութեան անդաս-
 տանը ինքեանք են, ծնողք և ընտանիք:

Ընթեռնուն թող, ընթեռնուն այդ դարու Հայոց
 արիւնով ու աւիւնով զուարթապարար սուրբ վարդա-
 պետին գրչագիրը՝ մեր խանդալից երիտասարդք, փափ-
 կասուն հարսունք, մեր աշխոյժ պատանիք ու վառ
 վառ օրիորդք, և թող ապրիլ ուսանին, ապրիլ հա-
 յարար:

«Ընթեռնուն զայն թող՝ մեր մամիկն ու պապիկը. որ
 իրենց ծնողաց վրայ կը հանգուցանեն, իրենց թեւոց ու
 լանջաց վրայ կը դգուեն իրենց մատղաշ թոռները,
 մրմնջելով անոնց փափուկ լսելաց՝ եղիչէի աղնուական
 մրմունջները:

Այս մատեանը, որ օծուած է Աստուծոյ հոգւով,
 յորում լի է ազնիւն ու բարին. սէրն և չորհրք. որ
 երկինքն ու հայրենիքը ի մի կը զանգէ. և իր ընթեր-
 ցողները կը բարձրացնէ կը թեւաւորէ, երջանիկ և հրե-
 զէնս կ'առնէ:

Այն ինչ ղիսկնացած եմք մեք այսօր, նա զմեզ
 կ'ողբւորէ, կը միաւորէ, կը յարուցանէ:

Ահա անոր մէկ փշուրն էր գրուած քիս նախերգանքը:

Եղիչէի մշակած դարաստանէն ծաղկաքաղ փունջ մի
 է սոյն տետրակիս նիւթը. անոր մեղուական փեթակէն
 մասն մասն քաղած մեղրը. զոր իրրեւ բոյր մը և ճա-
 չակ մը ընթերցասէր մանկուոյն հայկազանց կը հանեմ՝
 ընծայ մասին մի և եթ կրելեաց և զգացմանց մեր հարց
 երանելեաց առնել հազորդ. որոց ի չունչ և յոգին ոգե-
 խառնիլ ըզձանամ ամենայն Հայոց:

Տրամ՝ պէտք է անուանել զայս իմ գրական դուզ-
 նաքեաց գործս՝ թէ ողբերգութիւն, կամ այլ ինչ. ինձ
 փոյթ չէ արուեստական անուն մի տալ այսմ. քանզի և
 արուեստով չէ գրուած, ոչ ձեւոց և ոճոյ ընտրութիւն
 ու խտրութիւն է եղած: Դերք^ք և դերասացք թերի են
 և առանց կանոնի, նոյնպէս և արարուածները. կապն
 և հանգոյցը թոյլ են և բացէ բաց. սիրահարի տեսարան
 երբէք չգար յանդիման: Կրնայ անշուշտ լեզուին և բա-
 ուերուն ալ դասաստանը դատուիլ. և այլն:

Սակայն այս դրամս թատերական բեմական բան մը
 չէ, և զայն ՚ի գիր առնողը [հայոց կրօնաւոր մի է,
 վարդապետ մի է:

Ասոր մէջ գործածուած անունները, ոճերը, և գաղափարները ընդհանրապէս Ե. դարէն կ'առնուենք, նոյն դարու Հայոց պատկերը ներկայացնելու համար:

Տալ չնչև շունչ մը մեր հայրենեաց սիւքէն:

Տալ լսել արձագանք մը Հայաստանի քարերէն և անձաւներէն:

Տալ հառաչել հառաչ մը Այրարատայ խորշերը և Մայիսի ըստուերը սիրողաց սիրտերէն:

Տալ հանել հողոց մը, և առնուլ յողոց մեր նախնեաց հողիներէն, առնուլ օրինակ զՍտուած պաշտելու ապրելու մեռնելու՝ մեր պապերու կեանքէն:

Տալ ցօղել ցօղ մը 'ի ցօղոյ մեր աչաց, խառնել զայն ընդ արիւն հոսեալ մեր հարանց անձինքներէն:

Տալ սիրել Հայոց անոնց սուրբ յիշատակը և այն հողը, որոյ հացը կերան ջուրը ըմպեցին, որոյ օդով սնան, որոյ վրայ մեծացան զօրացան, ապրեցան, ինկան, և անոր փոշիներուն խառնուեցան իրենց ոսկորները:

Այս և եթ է ահա երկասիրողին ջանքն, փափագն ու նպատակը:

Ն Ա Ք Ա Կ Ի Տ Ե Լ Ի Ք

Ա. ՄԱՍԻՆ

Երբ սուրբ Վարդան և իւր հետ եղած Հայ նախարները Յազկերտէն կանչուելով Պարսից զուռը՝ կը բռնաբարուին կրակապաշտ լինելու, կ'երկարի իրենց վերադարձը, ու առ երեսս յանձն կ'առնուն Մոզական կրօնքը՝ և կ'արձակուին Յազկերտէն գալ 'ի Հայաստան Մոզերով, Մոզպետներով, զօրականօք, և կրակապաշտութեան ամենայն հանդերձանօք:

ՀՄՍՅԵՍԿ՝ սուրբ Վարդանայ եղբայրը միշտ հոգալով եղբոր և միւս նախարարաց այնքան յուշանալոյն վրայ, տեսիլք կը տեսնէ, և այն է որ առաջին զուռը կը բանայ Ա. մասին գրուածոյս. զոր կը պատմէ իր Համազասպեան եղբոր՝ 'ի լուր համայն իւրեանց սերնդոց և ծառայից Մամիկոնեանց Տան:

ՍՈՒՐԷՆ՝ ձեր ծառայն է Համազասպին՝ Վարդանայ հօր:

ՀԱՄՍ, ԶԱՍՊԵՍՆ՝ եղբայր է Վարդանայ և Հմայեկին:

ՎԱՀԷ՝ ձերունի հազարապետ՝ կամսարական Արշաւրի տան, որ Այրարատայ Օշականէն Արշաւրի կնոջէն կը զրկուի գոյժ բերել Հմայեկին թէ Պարսից զուռն գնացող Հայ նախարարք գ'բրիստոս ուրացած եկեր և մօտ են Հայաստանի դրան, զՀայաստանը կրակապաշտ ընելու համար: կը պատմէ այս Վահէն թէ սուրբ Հայրապետներ ժողուած՝ օրէնք և պատերազմ հրատարակեցին ուրացողաց դէմ:

ԲԱՋԷ՛ կապարճակիր Հմայեկին՝ կուզայ Աշտիչատէն ,
և Ռշտունի Սահակ եպիսկոպոսէն հրաւիրակ և բամբեր
Հմայեկին՝ պատրաստուիլ համնիլ ՚ի պատերազմ ուրա-
ցողաց դէմ :

ՏՈՂՄԱԿԱՆԻ Ե ԾՄԱՌԱՅԻ՛ Մամիկոնեանց , որք առ
հասարակ խրախուսուած վառուած սուրբ հաւատոյ
վրէժխնդրութեամբ և Հմայեկին ու Համազասպեանի
խօսքերէն , բանակ կը կազմեն Մամիկոնեան հախա-
րարաց տակ եղած բոլոր գաւառաց Հայերէն , և կը
խաղան յառաջ ՚ի ճակատ ՚ի կռիւ ուրացողաց դէմ :



3029 - 48

Ա.՝ ՄԱՍՆ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

ՎԱՐԴԱՆԱՅ ՏՈՒՆ ՚Ի ՏԱՐՈՆ

Հմայեակ .— Համազասպեան եղբայր , քանի գիշեր
է անաւոր տեսիլքներով կը զարհուրի հոգիս :

Աշտիչատէն սաստիկ հողմ կը շնչէ , Պարսից չար
քամիին դէմ անազին փոթորիկ կը յարուցանէ :

Հեղեղներ կը վազեն Արեւելքէն , և կայծակ ու
շանթ կատաղի ջրոց հետ խառն կու գան կ'ողողեն
Հայաստանին արտերը , կ'ապականեն , կ'այրեն , կը լափեն
մեր երկրի բովանդակ վայելչութիւնը :

Աստղեր կը ցոլային Գրգուրայ գագաթէն , աստե-
ղունք իբրև հարկուտի գնտալներ կը տեղային մեր
լեռները և Մասիս լեռը իբրև դէզ խոտոյ կը վառէր :
Կը վառէր՝ այլ իր գագաթան ձերմակ հերը , իր վրայի
ձիւնն ու սառոյցները անհալ կը մնար , և Նրասի այն
բոցերով տարցած կ'եռար , բայց իր մէջէն ցնցուղներ
կարձակէր մեր երեսին , որք թէպէտ ջերմ այլ զովացիկ
էին : Կ'եռար Նփրասն և կը փրփրար . իր մէջէն կելնէին
մեծամեծ կէտեր , կը կուռէին վիշապի սը հետ՝ որ
Պարսից կրակը կը բերէր : Անթիւ օձեր կային վիշապին
զինուոր : Եւ Մասիսի կողերէն առիւծներ իջան , Բլու-
նեաց ծովէն թռչուններ հասան . Կորգուաց լեռներէն
առիւծներ խոյսցան , վիշապին և իր օձերուն սղջ անձը
արիւնլուայ խոցեցին :



Անցք մի հանդերձեալ է անցնիլ Հայաստանի գլխովն :
Մեր Վարդան, մեր եղբայր, և այնքան Նախարար և
անթիւ Հայք՝ Պարսից դուռն են : Ա՛հ, ո՛վ գիտէ, Սաս-
ուած, Սասուած, ո՛վ գիտէ, ի՛նչ չարեաց ենթակայ
ինկած են կրկին գազան Յազկերտէն :

Երթամ, անշուշտ սուրբ ժողովքը գիտակ է :

Հաւնագաւապեալս.— Եւ ես ընդ քեզ :

Բոյոր Մամիկոնեալս.— Եւ մեք ձեզ հետ :

Հաւնագ.— Մամիկոնեանք Հայաստանին պաշտպան
և անոր նահատակներն են : Երթանք միատեղ :

Բոյոր Միսախն.— Ո՛վ Հայաստան...

Ո՛վ Հայոց ազգ...

Սուրեն.— Տէ՛ր իմ Հմայեակ (Չեռք հակսին զարնելով).
Այս գլուխը՝ դեղ դալար էր քան զվարդ մայիսին,
այս աչքերը՝ գեղեցիկ էին քան զձաղիկ Ծովասարին,
դեռ քանն էր իմ տարին. ես ոտքս յասպանդակ,
այս տէգն անազին գերան իմ ձեռին՝ Օձին շամբերէն,
իմ աղեղն էր կազմած Վիշապաց անտառէն, իմ նետն
մահարեք՝ կազնին Սեւսարին. ես՝ կապարձակիւր էի
Մամիկոնեանց քաջաց քո առիւծ պապերին. Սասուն-
եաց սարերը, Կորդուաց կորդ լեռները, երբ մեր ոտքը
կը կոխէր՝ կը սարսափէին մարդն ու գազաններ :
առիւծն իր կորիւն, արջն և իր ձագերը քանխն ենք
չամբրեր, քանխը խորտակեր :

Վարդան իմ ձեռքէս, այս արի բազկէս իր մարդն է
առեր. անոր նետն ու սուր բնաւ չեն վրիպիր, հազար կը
փոէ ու ինքը չիփռուիր : Ուր որ Վարդանն է, Հայեր յաղ-
թող են : Մի՛ բնաւ խռովիք : Երազն ի՛նչ բան է, տեսին
ինչ ցնորք : Մէկ Մամիկոնեան՝ հազար Պարսիկներ,
Վարդանն ախոյեան՝ բիւր թշնամիներ : Եւ անոր հոգին
երկնից հետ կապ է. Սահակ հայրապետն է զանի
օրհներ :

Ա՛հ, Հայեր Հայեր :

Արշալն ինչո՞ւ մասնեցիք...

Եւ ո՞ւր ձեր խեղճն Արտաշիր...

Հաւնագ.— Սուրէն լո՞ւ է... Լո՞ւ՞ Սուրէն...

Սուրեն.— Բայց ինչո՞ւ իրենց թագաւորները
մասնեցին, ինչո՞ւ իրենց ջարերարները. սպանեցին :

Սուրբ Սահակայ շղթանները յիշեցէք :


Բոյոր Միսախն.— Ա՛հ սուրբ հայրապետ. Սահակ
Հայրապետ :

Սուրեն.— Ողջոյն Արեաց դուռն և Պարսից լեռները
դեռ կը սասանին Մամիկոնեան Վասակայ անունէն :
Շաղրէ սարսափեցաւ անոր սուսերէն : Մուշեղին նիղակ
ու հրեղէն ձերմակ. շատ ջարդեց գաւառիկ քան
զԴաւթի հրեշտակ : Չիրաւայ դաշտն էր անոր հանդէս,
և Նպատ անոր նահատակութեանց արձան : Եւ ձեր
հայրն. ա՛հ, իմ տէրն Համազասպ, իր բոլոր օրեր
պարսկին մահ էր, հայուն կեանք էր : Ի՛նչ, լըռեմ :
Ի՛նչպէս, մոռանամ : Միթէ անոնց որդիք չէք դուք, միթէ
անոնց ծառան չէ՞ Սուրէն :

Հնայ.— Լո՞ւ՞, Սուրէն, Լո՞ւ՞ : Մուշեղին բազուկը
կը սիրես, լո՞ւ՞ : Համազասպին մահը կը սիրես, լո՞ւ՞.
հին ցաւերը թո՛ղ, նոր ցաւերն ալ շատ են Հայաստանին :
Ա՛հ, Սասուած, Սասուած, մեր աչքով, մեր օրով ինչեր կը
տեսնենք : Դենչապուէ խորամանկ, աղուէս Դենչապուէ
Հայաստանը չըջեցաւ և անոր հիմունքը չըջեց : Ազատ
ժողովուրդը գերութեամբ կապեց : Ազատ եկեղեցին
ստրկութեան ենթարկեց : Մահու դեղ նա հայաստանին
կերցուց քաղցր ձաշին հետ, և այսօր Մասիսն և իր
զաւակները ՚ի սիրտ թունաւորած են. Այրարատն ու իր
բոլոր գաւառները մահու տագնապ կը կրեն : Հայեր,
հայեր, ձեր թագը մասնեցիք, ձեր կեանքը օտարին
ընծայեցիք. արիւնդ անոր փառաց համար, վաստակը
անոր չահուն համար, և այսօր քու հաւատքն ալ կը
բռնարարէ, քու հոգիդ ալ իրեն գերի ընել կ'ուզէ :

Ամէն օտարը՝ իրեն զիմող ու ապաւինող ազգին ա՛յս պակաս կուտայ... այս վախճանը կուտայ...

Ո՛վ է սա կուգայ:



Վահե. — Ողջոյն:

Հնայ. — Վահէ՛:

Վահե. — Տէ՛ր խմ՛:

Բոորը Միսաիկ. — Բարի՞ է, Վահէ՛:

Վահե. — Բարին Աստուածն է: Օշականէն կուգամ ուղղակի, Արշաւրի Տանէն. Կամսարական բամբիչը զրկեց զիս գոյժ տալ ձեզ:

Բոոր Միսաիկ (Չեո՛՛ գնակասի). — Աստուած. Աստուած...

Վահե. — Չեկան միթէ տակաւին Սրբոց թղթեր և հրեշտակները այս տեղ: Բոոր լեռները ու ձորերը զինաւորուած պատրաստ են. գեղն ու քաղաքներ բանակ կտրեցան. կը վազեն Պարսից ճանապարհը, և եկեղեցին իրենց հետ կընթանայ Սուրբ Վարդապետներ և Քահանաներ զօրապետի պաշտօն կը վարեն, խաչ ՚ի յաջին, Աւետարան ՚ի ձեռին. և օրէնք հրատարակեցին,

«Թագաւոր Աստուածն է.

«Սրբայր զեղբայր մորթէ.

«Ամուսին զամուսին սպանէ.

«Հայր զորդին սատակէ.

«Որդին զհայր խոցոտէ:

«Պատերազմ Աստուծոյ հաւատացելոց՝ ընդդէմ զԱստուած ուրացելոց»: Եւ անա կնիկներ քաջ քաջ կը խիզախեն, կաղաղակեն, կը վազեն, արցունք աչքերէն, արիւն սրտերէն. կը հոսեն իրենց կոխած հողերու վրայ, կը վազեն մեռնիլ ու մեռցունել իրենց անձանց կտորները: Ամայացան քաղաքները:

Հաւնագ. — Բայց ի՞նչ է այդ ամէն, ինչո՞ւ այդ ամէնը, Վահէ՛, ինչո՞ւ համար:

Հնայ. — Եւ ո՞ւր է բանակատեղը...

Սուրեն և Բորրեֆեան. — Սուրեր առէք. զէնքեր բարձէք: Դարձի՛ր Վահէ. ամէնքս ալ այն տեղ:

Վահե. — Գուժիան հասաւ Պարսից բանակէն. Հայ նախարարներ մոխիրը պաշտօնցին, գ՛րբիստոս ուրացան:

Բորրը Մեկեղ. — Չ՛րբիստոս ուրացան:

Վահե. — Այո՛. և մոզպեաներ իտեց հետ, և մոզեր անթիւ, և քաջ քաջ զօրքեր կուգան Հայաստանը:

Սաչերը կործանելո՞ւ համար:

Սուրբ տաճարները ապականելո՞ւ համար:

Սուրբ Աւետարանը այրելո՞ւ համար:

Սուրբ քահանաները սպաննելո՞ւ համար:

Հաւնագ. — Բայց մեր հաւատքը յաղթող է, մեր հաւատքը մեր հոգին է. մեր կեանքն է:

Հնայ. — Եւ Վարդանն ալ նոյն վտանգին մէջն է, Վահէ:

Վահե. — Այո՛. այդպէս ասաց գուժիան:

Հնայ. — Վկայ ինձ սուրբ Աւագան, եթէ այդպէս, իմ սուսերս յառաջ Վարդանայ կուրծքին: Իսկ ո՞ւր են արդ սուրբ Վարդապետները:

Վահե. — Իւրաքանչիւր եպիսկոպոս իր վիճակը վագեց, մէկ խաչի վրայ, մէկ Աւետարանի վրայ ամէնքը իրենց աջը զրին, ուխտ ըրին, երգուան ու գնացին: Քահանաներ թողին եկեղեցին, ու գեղեր և չէները կը չըջին, Հայեր կը զինուորեն, և Սահակ եպիսկոպոսն արգէն Աշտիշատ հասաւ:



Բազի. — Տէր իմ Հմայեակ :

Հնայ. — Դո՛ւ ես Բազէ :

Բազի. — Ծառայ քո, Տէր իմ : Աշտիշատէն կուգամ :

Սահակ Սրբազան հրաման հանեց, և ահա Բագուն ու Մեղտին, Տաճն ու Խորոնք, Կվարսն և Յրոնք, և ողջոյն Տարօն իրրեւ երամ գարնան հաւքերաց, իրրեւ Օգոստոսի ամսոյն արագիլներու կարաւանը՝ ժողված են Հայեր Եփրատի բերանը : Այս տեղ հասայ, նոյն քարոզը լսեցի. զէնք և սուր, Աւետարան և խաչ, մանկտին և հարիւրամեան, երիտասարդն և կոյս, այր և կին, ՚ի զէն ՚ի կռիւ, ՚ի բանակ : Ձեզ կը մնան, Մամիկոնեան Տեարք :

Հնայ. — Ողբի բերզը հասէք Խոյթ և Սասուն պացէք, Պայունեաց, Գնթունեաց, Վարաժնունեաց, Ապահունեաց, Կորդուաց, Խորխոռունեաց, Քաջբերունեաց, Առերբանին, ձայն տուէք, և Հաչտենից Ոստանիկներուն իմացուցէ՛ք : Դաշտն ելէք Աղծսիք վագեցէք, և բոլոր անրականաց, քաղաքացեաց, լեռնականաց, գեղջիկականաց քարոզ կարդացէ՛ք, թող թողու վաճառականն իր վաճառքը, սուրբ Աւետարանը պահպանէ : Ձինուորն թողու իր պահակը, քաղաքացին իր տունը, և կրօնից ամուրը պաշտպանեն : Գեղացին թող թողու իր մաճն ու արօրը, թող արձակէ իր եզն ՚ի լուծէն, հաց պէտք չէ հայուն, այլ զէնք և հոգի, և արիւն : Ասացէք հարսներուն, թող թողուն առագաստը, փեսան թող բաժնուի հարսէն, քանզի ահա ապականել կու գան սուրբ եկեղեցւոյ առագաստը : Թափեն թող, թափեն արծաթն ու ոսկին, խաչ և զէնք վեր առնեն Հաննն թող ձգեն կոյսերը՝ իրենց անձանց զարդարանք, և արիւթիւն զգենուն : Սուրբ Քայանայք թող զուրս գան տաճարի դռներէն, նստուծոյ տաճարը կ'երթայ, անոր առջևէն թող քայլն օրհներգ երգելով : Նախարարացն ասացէք, թող չի հոգան իրենց գանձը, թող չըզրաղնուն իրենց ձօխութեանց, Աստուծոյ և յոգւոյն կոչման թող վագեն

Տիկնայք թող մերկանան իրենց պըճրանքները, աղօթք և քաջալիրս թող կարթան : Ծառայաւ դիմեն, շտապաւ հասնին : Սուր և Խաչ, Քրիստոս և արիւն, հաւատք և մահ : Սպառազինութիւն թող զգենուն, հաւատով թող զարդարուին, ՚ի Քրիստոս թող յագենան, ՚ի սէր նորին արիանան : Կրօնք և մեր կեանք, Քրիստոսն և Հայաստան մեզ հրաւէր կը կարդան : Պարսիկն և իր պիղծ կրակ, Օտարն և իր սուտ հաւատք, Մոգերն և մեր ուրացեալ նախարարք՝ Հայաստանն են եկեր : Նեա առէ՛ք, ազեղ բարձէ՛ք, վահան, նիզակ, պարս, սուր, դաշնակ, վաղակալո՛ր, գնդակ, գերանդի, վերցէ՛ք, քալեցէ՛ք : Առաջին հարուած Հայ ուրացողաց : Այո, Հայ ուրացողաց : որոց աղէկ էր մեռնէին հաւատով Պարսից դրան առաջ, քան ապրած կեանքով Հայաստան գալին՝ մոռ և մոխիր իրենց հետ բերած : Ձը խնայել, չողորմել քնաւ սիրելեաց, ծնողաց, եղբարց և ազգականաց : Հայու ազգէն չե՛ն ալ անոնք, որ ճշմարտութիւնը ուրացան : Մեր սիրելիք չե՛ն ալ անոնք որ զՔրիստոս ուրացան : Մեր ծնողք և եղբարք չե՛ն ալ անոնք, որ յաւիտենական կեանքն ուրացան, սուրբ աւազանը մոռացան : Սպանեցէ՛ք, ջարդեցէ՛ք, որ զՔրիստոսի խաչն և Լուսաւորչի չարչարանքն առ ոտն կոխեցին, սուրբ եկեղեցին և մեր բոլորին հոգին գերի գարչելեաց անելու կուգան : Ո՛վ, օտար, օտար, ո՛վ Յազկերտ, Յազկերտ, դու կարող չէիր Հայաստանի մագին անգամ զնասել, եթէ զմեզ դաւաճան չունենայիր՝ Հայաստանին մատնիչ չը լինէին Հայերը : Ասոր համար՝ կամ մեր մահն անոնցմէ, կամ անոնք մեռնին մեզմէ : Բայց մեք չե՛նք մեռնիր : Եթէ Աստուած կը մեռնի, Հայ ազգն ու իր հաւատք, Հայաստանն ու իր եկեղեցին ալ կը մեռնին :

Հաւնագ. — Այո՛, եթէ արեւն իր ջրջանը կը փոփոխէ, սակայն Հայը քանի կ'ապրի իր կրօնքը չի փոխեր, Քրիստոսն ու Լուսաւորիչ, Լուսաորիչն ու Հայաստան,

Հայաստանն ու եկեղեցին, եկեղեցին ու Հայ, Հայն ու Հաւատ, Հաւատն ու Կեանք, Կեանքն ու Մահ՝ մէկ անձնաւորութիւնն են եղած, և առաքինութեամբ և անմահութեամբ իրար հետ շաղախուած: Չե՛ն բնաւ սասանիր. մի՛ ոք վհատի երբէք: Այն փորձութիւնները մեր հաւատքին պայծառութիւնն կը բերեն, մեր սուրբ եկեղեցեաց հաստատութիւնն իւրեւան: Ահ՛ վախցէ՛ք այն օրը ողբացէք՝ այն ժամանակը, երբ հաւատքն ու եկեղեցին իր որդիքներէն փոխանակ պաշտպանուելու, շահավաճառութեան և մարդահաճութեան միջոց կը դառնայ: Ողբացէք այն ժամանակ, երբ ժողովուրդն անգէտ և անշգայ՝ իրրեւ ոչխար անմեղ, բայց անբան, երբ իշխանն փառամոլ և օտարին անձնատուր, երբ զինուորն և զօրապետ վատ և նենգաւոր, երբ կրօնաւորն մարմնասէր, եպիսկոպոսն իր պառուօղ համար՝ քահանայն արծաթի համար՝ կը փոխարինեն ազգն ու կրօնքը, կը փոխեն զՔրիստոս, կը ծախեն զԼուսաւորիչ: Կու տան Սաչն ու հաւատքը, և կ'օտնուեն իրենց անձանց փառք: Կը վաճառեն եկեղեցին, և կը գնեն իրենց մեծութիւն: Կը վաճառեն զժողովուրդը, և անոր գնով կը զարդարուին, անոր արիւնով կ'ոսկեզօծեն իրենց կուրծքն և ուսերը, կը պսակեն իրենց պարանոցն ու գագաթը, ողբալու է այն ախտակիր ժողովուրդը. ողբալու է այն անկարեկից հովիւն ու առաջնորդը: Իսկ մեք՝ ե. դարու Հայքս, մեք և մեր սերունդ՝ գառն մեր խաղաղութեան մէջ, առիւծ մեր հաւատոյ վրէժխնդրութեան մէջ. փառք մեր եկեղեցականաց, պարծանք մեր իշխանաց, օրհնութիւն մեր ժողովրդականաց: Ահա՛ զէնք, ահա՛ մեք, ահա՛ պատերազմ, ահա՛ Հայք. ահա՛ հաւատք, և ահա՛ հաւատացեալքս. ահա՛ մահ և ահա՛ մեր կեանք, ահա՛ Քրիստոս, և ահա՛ մեր անմահութիւն, փառք, ուրախութիւն, սիրելի, ծնող, որդի, եղբայր, գանձ, պատիւ և ամենայն ինչ:



Բողոքը միասին.—

Մեք Լուսաւորչի գառներն ենք,
Տրդատոյ առիւծներ.
Հայաստանի զիւցազներն ենք,
Քրիստոսի հաւատացեալներ:
Հայրենեաց պաշտպանք.
Հաւատոյ նահատակք:
—Երթանք հապա երթանք:

Թէ մեռնինք, կ'ապրինք.
Թէ մեռցնենք, կ'ապրինք.
Մեր մայր սուրբ եկեղեցին,
Մեր Հայրենիք երկինք.
Ուր ներսէն է, ուր Սահակ.
Ուր Քրիստոսն է, ուր արդարք և
անմահ հրեշտակք.
—Երթանք, հապա երթանք:

Մ'նայ բարով եփրատէսն.
Մ'նայ բարով Տարօնն և Տօրոս.
Իննականեան ազրեքք.
Բիւրակնեան լերինք.
Մ'նան բարով մեր նախնեաց շիրիմք,
Սասունն ու Տաղօնք.
Գրգուռն և Ներքովթ,
Մ'նան բարով Մեղրի ջուրքն
Եւ աղբերակունք:
—Երթանք, հապա երթանք:

Մ'նան բարով վանորայք.
Մենաստանք և նշխարք սրբոց.
Դաշտն ու արմտիք, ծաղկունք և
կրամք թռչնոց:

Երամք թռչնոց,
 Եկէք, ձեր ձագերով մեր վայրը
 վայելէք.
 Միւշեւ դառնանք մեք, կամ մեր
 սերունդք:
 Կ'երթանք պատերազմ սուրբ կրօնից
 համար.
 Ձեզ մնան մեր գանձ, տուն, արտ,
 ոսկին, և աշխարհ.
 — Երթանք, օն ուրեմն երթանք:



Հնայ. (Մրայպոյզ). — Այդպէս, առաքինիք, այդպէս,
 թող իմանան ազգեր թէ իրաւունքը առանց թագաւորի
 ալ կը տիրէ, առանց թագի կը թագաւորէ, և առան,
 զօրապետի և զինքի ալ կը յաղթէ: Հայոց կուսանք
 զիւցազունք են, հայոց կանայք արիականք, և արք
 յաղթականք: Հապա՛ իմ հա՛րք և եղբարք, հապա՛
 իմ քորք և իմ մարք, հապա՛ անյապաղք:


Հանազ. — Լսեցէ՛ք, անսացէ՛ք, քաջեր, իմ ձայնիս,
 իմ վերջին բանիս: Ուխտեցէ՛ք առ Աստուած, և
 սրտապնդեցէ՛ք զձեզ: Այս առաջին չէ որ դուք ՚ի կռիւ
 կ'ելնէք, բայց առաջին անգամն է որ յանուն կրօնից
 կը կռուէք, և աշխարհաւ, և կնաւ, և որդուով կ'ելնէք:
 Կ'ելնէք ՚ի կռիւ հաւատոյ համար, և որքան քաղցր
 է մեզ արինն թափել այս սուրբ ուխտին վրայ, այնքան
 աճեցուն այնքան հաստատուն պիտի ընէ Աստուած
 մեր արեամբ իր սուրբ եկեղեցին այս հողերուն վրայ:
 Գիտեմ կը ցանկայք ամենեքեան մեռնիլ սուրբ հաւա-
 տով, մտնել վայելի երկնից արքայութիւնը, բայց
 մի՛ համարիք թէ մեք վերջինն պիտի լինինք Հայաստանի

աստուածապաշտները. ո՛չ, ո՛չ... Այս աշխարհը,
 Աստուծոյ ոտից ասպընձական երկիրը, Աստուծոյ աչաց
 հաճելի աշխարհ, Հայաստան, որ իւր արաչազործ
 ձեռաց նախկին դաստակերտն է Եդեմ, Նոյ և Հայկ
 Աստուածապաշտները ա՛յս տեղ: Այս երկիրը, զոր և
 ՚ի նորունա փրկագործութեամբ հրաշագաղղեց, Առաքելոց
 բանիւն և արեամբ, Նահատակաց ճգնութեամբ և
 մարտիրոսութեամբ, Լուսաւորիչին չարչարանօք և
 լուսաւորութեամբ, Իւր Աստուածային փառաւոր
 Իջմամբ, և Շողին ծագմամբ: Այս Աշխարհ կ'ըսեմ,
 որ ծագէ ՚ի ծագ եկեղեցի է և արքայութիւն, յաւիտեան
 պիտի մնայ: Հայաստանը Հայաստան պիտի մնայ. Հայն՝
 Հայ, և իր հաւատքն ՚ի Քրիստոս պիտ անխափան
 մնայ, քանի ասուցին յաստեղատուն կը շրջին: Ի զուր
 թող չաշխատի Չազկերտ: Այո՛ այն օր աս անուններ
 կը փոխուին՝ երբ հայն իր եկեղեցին փոխէ: Հապա՛,
 անուն մեր ետեւէն, առաքինութիւն մեր առջեւէն,
 անմահութիւն յերկինս, անմահութիւն յերկրի, յիշատակ
 մեր սերնդոյ. պսակ ընդ սըրբոց: Հայն իր կեանք,
 իր ազգութիւն իր ազատութիւն իր եկեղեցւոյ մէջ
 պիտի գտնէ, և ամէն բան կը կորնուսանէ, երբ իր եկե-
 ղեցին կորուսանէ: Կ'անցնին վայելչութիւնք, փափկու-
 թիւնք, ճոխութիւնք, գանձ, ոսկին, կ'անցնին ազգեր
 և իրենց կարծիքներ, կը կործանին թագաւորութիւններ,
 կը զլորի թագն, կը փչրին զէնքեր, կը ննջեն կենդա-
 նիներ, մէկ բան է որ կը մնայ, Քրիստոս և իր եկեղե-
 ցին, և անոր համար է ա՛հա մեր նահատակութիւն:
 Մեք կը ննջենք մեր հարց շիրիմներուն ծոցը, կուգան
 մեր սերունդները, կուգան օրհնել զմեզ կամ անիծանել.
 կը քննեն մեր գործքեր և անուն կը կնքեն մեզ: Եթէ
 սգան մեր եղբարց ուրացութեան վրայ, թո՛ղ միտիմա-
 րութիւն մեր առաքինութեանց վրայ, եթէ անոնք կորուստ
 քննեցին իրենց հողոցն, և ամօթ մեր դարուն, մեք պար-

ծանք վաստկինք սուրբ եկեղեցոյն և մեր անձանց և հայրենեաց փրկութիւնը: Չըսուի, չխօսուի, չը յիշատակուի ազգաց մէջ թէ Հայերն ուրացան: Մեր դարուն նահատակութիւնը տեսնեն, անոնց վատութիւնը մոռանան, և ասեն. Հայեր այն ազնիւ ազգն են, որ իրենց կանայք և կուսանք իրենց ծերք և երիտասարդք, իրենց մանկունք և արք, արիական են, պատուական են, ճշմարիտ են:

Ողջոյն տուք միմիանց,
 Օ՛ն ուրեմն յառաջ,
 Պաշտպան մեզ սուրբ խաչ-
 կեցցէ Հայաստան.
 Կեցցէ Հայոց Ազգ:

Բոլոր Ախախն.—Օ՛ն ուրեմն յառաջ,
 Պաշտպան մեզ սուրբ խաչ-
 կեցցէ՛ Հայաստան,
 Կեցցէ՛ Հայոց Ազգ:



Ն Ա Ր Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Բ. ՄԱՍԻՆ

Արդէն Վարդան Հայոց զօրավար եղեր է, իր խոստովանութիւնը յայտնելով սուրբ ուխտին:

Վարդանայ երէցը իր եկեղեցիով՝ ջարդ ու փշուր ըրած է մոզեր և մոզպետներ:

Քրիստոսի քանակը կազմուած ու զօրաւոր հողով ջախջախեր է Պարսկին զօրքը: Վասակը իր նենգութեամբ յայտնուեր է, ու կրկին երդում ընելով խաբեր է Հայեր և ազատեր զինքը: Շատ քաղաքներու և գաւառներու տիրած են Հայեր:

Ներշապուն Արծրունին կողմնապահ կարգած են արեւելից վասակայ հաւատացած են Հայաստանին միջնաշխարհը պահպանել, և Վարդանն իր հետն առած կտրիճ Հայ զօրքեր դնացեր է Աղուանից աշխարհը Պարսից դէմ կռուիլ, Աղուանից քրիստոնէութիւնը պաշտպանել:

Վասակը պատեն միջոց դտնելով կրկին Պարսից հետ Պարսիկ եղեր, և ամէն կերպ անկարգութիւն, բռնութիւն, աւեր և ապականութիւն Հայոց աշխարհին և սուրբ եկեղեցեաց վրայ հասուցեր, Հայ նախարարաց ընտանիք և գանձերը գերի տարեր է:

Վահէն, կամսարականի տան ծեր և հաւատարիմ քաջ հազարապետը այս միջոցին Օշական՝ Արշաւրի տան մէջը նըստած՝ ինքն իրեն հողով կ'եռայ հայրենեաց, քրիստոնէութեան և քաջութեան սիրոյ կրակէն, կ'սկսի

բարձր խորհուրդներով և վսեմ՝ զգացումներով խօսիլ . որով կը բացուի գրուածոյս Բ. մասին գուռը : Զարեհ Սիւնեցի, Վասակին հաւատարիմ թիկնապահներէն մէկը, կեղծաւորութեամբ Վահէին մօտ կուգայ, ամբարիշտ զգացմունքներով և խորհուրդներով կ'սկսի ընդդէմ խօսիլ Վահէին . Վահէն կը մատուխանէ . Զարեհ կը փաստարանէ անզգամութեամբ, և Վահէ բարեպաշտութեամբ :

Նէրսէհ և Հրահատ՝ Կամսարական Արշաւրի փոքրիկ գաւախները՝ Վահէին գիրկը ինչպիսիով իրենց հօր և Վարդանայ դարձը կը հարցանեն :

Սիւնեցի Զարեհ կը մոմոայ անոնց վրայ : Եւ անա յանկարծ զղրղիւն, և աւետարեւրք կը հասնին, թէ Վարդանն ու Արշաւիրը բանակաւ ու յաղթանակաւ զարձան ողջ Աղուանից աշխարհէն, ու Վասակայ ձեռքէն խլելով տարած գանձ և ընտանիք նախարարաց, կուգան ցընծութեամբ :

Սյս Աւետեաց ձայնին խորին զմայլման մէջ կ'ընկզմի Վահէն : Զարեհ՝ ամօթով և ան ու զողով հազիւ կը սողոսկի կը փախչի դուրս Կամսարականի տանէն :

Վահէն կ'սթափի և սուր կը խնդրէ : Զարեհը կը վնտրէ որ զոհ մ'ընէ այն կընդութեան տօնին՝ ամբարիշտին կեանքը . ապա գոհութիւն և օրհնութիւն կը կարդայ արտասուօք՝ խաչելոյն և բարձրելոյն Բրիստոսի Աստուծոյ :



Բ. ՄԱՍՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՕՇԱԿԱՆ ԱԻԱՆ, ԱՐՇԱՒՐԻ ՏԱՆ ՄԷՋ

Վանկ .— Հասաւ վերջապէս այն օրը, որ յաւիտենականն Աստուած վճռէ Հայաստանին նոր կեանք կամ կորուստ : Ահա՛ մէկ կողմէն Պարկաստանն իր կրակով և մոխրով, մոգեր, մոգպետներ . զօրքեր և ուրացողները բերաւ լեցուց Հայաստանը . մէկալ կողմէն եկեղեցին իր գաւախներով, Հայաստանն իր Հայերով կը ժողովին, կը գինուորին, կուռել այս անագին վտանգին դէմ, վանել կամ մեռնել այն գարշկի կրօնքին դէմ : Ահ . Աստուած, Աստուած, դու որ սուրբ մարտիրոսաց արեամբ պսակեցիր այս աշխարհը, և անոնց օրհնեալ մասանց նշխարներով զարդարեցիր, պատսպարեցիր, սիրեցիր այս ազգը, և իբրեւ քո ձեռատունկ Ադին ծաղկեցուցիր վայելչութեամբ, քո մարդասիրութեամբ, քո Հայասիրութեամբը փրկութեան եկեղեցի կազմեցիր : Հայաստանի վարդ Սանդուխտն քո առաջին պատարագն է մեր եկեղեցւոյն . սուրբ Առաքելոց քրտինք և արիւնը յիշէ՛, Հովիտիմեանց Անձինք քեզ նուիրեալք, սուրբ Գրիգորին վերապն, Բեւեռք, Կոճեղք, Կապարն, Ադն, Մոխիրն, Կախաղանն, Աղօթքն, Ճգնութիւն, Տքնութիւնն, Քանանայութիւնն, Սրբութիւնն, Ներսէսին առաքինութիւնք և բաժակ : Սահակին չղթայք, առտասուք, յիշէ՛ տէր, յիշէ՛ և մի՛

մոռանար, որ ՚ի ձեռն նոցա քեզ հաւատացինք: Մի՛ թողուր խաւարն զորանայ քան զլոյսդ, մոխիրն բարձրանայ քան զարեւդ, Պարսիկն քան զՀայ, Արրուշանն քան զԵկեղեցին, կրանն քան զխաչ: Կեանք մը ունինք, և այն սուրբ եկեղեցին է: Տե՛ս, Աստուած, տե՛ս այս աշխարհը: Իր զօրանոցները փլան, և մենատանները անոնց տեղ շինուեցան, պալատները քակուեցան և եկեղեցիք անոնց տեղ կառուցան, թագաւորութիւն գնաց, և քահանայութիւն անոր տեղը տիրեց, գանձն ու ոսկին սպառեցան, և քո սուրբ հաւատքին միայն կը հսկենք, վայելութիւն կորսուեցաւ, և քո սուրբ Աւետարանով միայն կը փառաւորուինք. մեր սուրբն ու զէնքը դրինք օտարի ոտքին տակ, մեր ոյժն ու կեանքը տուինք մեզ տիրողինք: Տե՛ս, Տէր, ոչ միայն Պետրոսի նման ուռիան մը և նաւ մ՞է որ կը թողուք, այլ ամէն բան: Թողինք, թողինք զամենայն և եկանք քո ետեւէն Տէ՛ր, էնչպէս քո բանը կ'աւետարանէր. միայն կ'ազաչենք որ դուն ալ զմեզ չը թողուս. քո եկեղեցին չը թողուս:

Մասեաց սա՛ր, Մասեաց սա՛ր.

Այս վաթսուն գարուն իմ զլիովս կ'անցի. իմ ալիք ձերմակ, քո գագաթ ձերմակ, ես չէի տեսեր այսպէս մեծ վտանք: Ո՛հ, չե՛մ կարող ժուժել: Այլ դու յաւիտենի՛ց արձան, դու քո բնակչաց, քո որդւոց վիճակը այսպէս զառնագոյն կը տեսնես, և ինչպէ՛ս կը ժուժես. կամ ինկի՛ր դուն ալ, ինկի՛ր կործանուի՛ր այս ազգին հետ, կամ պահէ՛ ասոնք ալ քանի որ կ'ողջագուբլիս դու երկնից ցօղին ու ամպերուն հետ: Ազգեր որ կ'ուզան, գրեզ Հայաստանի լեռ կ'անուանեն, քո վրայ հայկական անուն և քաջութիւն և հաւատք կը կարդան: Բայց երբ Հայն ու Հայաստան փնտոնն ու չգտնեն, գրեզ ալ կը մերժեն, քեզմէ այն անունները կը պահանջեն, յայնժամ գրեզ ալ չեն ընդուներ: Այո՛, թէպէտ այսօր դու օտարի մը ձեռքի տակն ես, բայց քո որդւովք դեռ կը բերկրիս: Այո՛,

թէպէտ Հայեր այսօր օտարի մը ձեռքի տակն են, բայց դեռ Հայ են, և քանի որ Հայ են կեանք ունին, կ'ապրին. և քանի որ կ'ապրին. որ մի կ'ազատուին: Աստուած՝ ազգ մը կը ձգէ կը ժամնէ. բայց խալառ չի կործաներ. գաննք կը չարչարէ, կը մերկացնէ, հայրենիքէն ալ կը հանէ կը ցրուէ կը տարագրէ. բայց քանի որ այն ազգը իր անունն իր լեզուն և կրօնք չի փոխեր, կը պահէ ու չի փոխեր, այն ազգը կ'ազատէ, այն ժողովուրդը կը փրկէ Տէր: Ազատութիւն, փրկութիւն, ոչ թագաւորի թաղին ճաճանչաւոր ականց շարքին մէջն է, ոչ գոռ և հուժկու գորսպետին անեղ հրամանին մէջը, ոչ նախարարին մեծութեան, ոչ գանձուց, ճոխութեան, ոչ սկսից բազմութեան, ոչ սրդոխտին երկաթին, ոչ սուրին նիզակին, ոչ կերպասի բեռնէղին, ոչ ճարտասանի լեզուն: Այլ այդ սրբազան տարերքն ժողովուրդն է միմիայն. քանի կ'ապրի ժողովուրդ մը իր սեպնական ազգային կեանքով, կ'ապրի ազգային լեզուով, կ'ապրի իր հայրենեաց մէջ պաշտած և իր նախնեաց պաշտած ճշմարիտ կրօնքով, այն ժողովուրդը՝ թէ և յետին զեղջուկ փնտցած լինի, սակաւաւոր և յետին սողքատ, յետին ստրուկը համարուած լինի, բայց նա ազնիւ է, կենդանի է, լուսաւոր է, որ մի փառաց կը հասնի. անոր սիրտն հայրենիքը չի՛ մոռնար, անոր հոգին զԱստուած կը պաղաւտի. իր ազատութեան համար, և հայրենեաց ու ազգային յիշատակներ կեռացնեն անոր երակներ, կը վառեն անոր խորհուրդը, կը յորուցանեն անոր հոգին, և այն օրն է անա որ աւաղակէն դուրսուած և անոր բռնաւոր շուղին տակը մատնուած վիրաւոր մէջքակոտոր գառնուկը. եղջերաւոր խոց կը դառնայ, իր հօտին մէջ կը խոյանայ, դարնելով, խորտակելով իր զէմ եխողները. այն օրն է անա, որ իրրու տկար ճնճողակ որսաղեալ նենգազէն արծուոյ ձագերը՝ ճանկոտելով իրենց սուր ու զօրացած մազկիներով որսացողին երեսը,

կը թոչին ազատ, և կը խոյանան իրենց երամին մէջ: Ա՛ն Մասիս, թէ իյնան քո որդիք, թէ ցրուին քո որդիքը թէ ստրկանան քո որդիք, ևս կը մեռնիմ, դու անմահ ևս, ասա՛ անոնց այս պատուէրը. Պինդ թող պահեն իրենց լեզուն, Պինդ՝ իրենց անունը, Պինդ՝ իրենց կրօնքը, և կը փրկուին օր մը, կը փրկուին և կը խոյանան խայտալով. քո երեսաց առջեւ: Բայց ևս ի՛նչ կը խօսիմ, ցնորած եմ սրտիս ցաւերէն, խռոված եմ մտացս խորհուրդներէն:

— Ո՞վ է այն:

Չարեհ.— Չարեհ Սիւնեցին, որ կը բարեւէ զձեզ:

Վահե.— Բարի է, Չարեհ. ի՛նչ լուր, ի՛նչ ձայն կայ բանակէն. յաջող են Հայեր, յաղթեց խաչ, տիրեց եկեղեցին:

Չարեհ.— Վահէ, Վահէ, ձգէ՛ այդ անհնարին իրաց երազները. ի՛նչ յաջողութիւն, ի՛նչ յաղթութիւն, ի՛նչ տէրութիւն. այս ստրասափելի անցքեր քու աչքիդ առջեւէն անցած, ի՛նչ մեծամեծ գործեր գործուեցան. դու տակաւին Հայեր, խաչ, եկեղեցի կը հաւատաս. և կը յուսաս կեանք տեսնել անոնց, յաղթանակ տեսնել անոնց:

Վահէ, դու գիտես Յաղկերտին խորագէտ, իմաստուն և հզօր կարողութիւնը, դու գիտես Պարսկին անպարտելի արիւթթիւնն, անթիւ գօրքն ու գօրութիւնն. և որոնք կրակ կը պաշտեն, կրակով կարես իրենց հոգին կը բորբոքի, իրենց արիւնը եռ կուգայ, հրեղէն հեղեղներ կը վազեցնեն չորս կողմն տիեզերաց:

Հայն ո՞վ է, որ անոր զիմսգրաւ կանգնի. և քո պաշտպան խաչն ու եկեղեցին չեմ հասկնար թէ ի՛նչ են և ի՛նչ գօրութիւն կուտան իրենց հաւատացողին:

Կրօնք մը պէտք է մարդուս. թող չը լինի աւետարան, թող լինի մոգականն. թող չը պաշտենք խաչ, պաշտենք կրակ. թող փոխանակ Յովսեփայ որդւոյն,

հաւատանք Զրադաշտին. չեմ գիտեր ի՛նչ առաւելոց մեզ Բրիստոս, և ի՛նչ կը պակսեցնէ Զրադաշտն: Այլ այս քաջ գիտեմ, երբ Յիսուս Բրիստոս Հայաստան մտաւ, արիւն, մահ, աղքատութիւն, ստրկութիւն, աւերումն, և ամէն կերպ չարիքն յաճախեցին այս աշխարհը. մերկացաւ Հայն իր վայելչութիւն, ճոխութիւն. աղաւաղեցան փառքեր, եղծան կարգաւորութիւններ. ինկաւ նիզակ քաջին ձեռքէն, փչրեցաւ պսակ արքայի գլխէն. թագաւորն եղաւ ստրուկ, և սարուին յառաջացաւ հսկայն անարգութիւն վիճակեցաւ, և գաւճաճն մարդու կարգ անցաւ: Ամէն բան վեր ՚ի վայր ըրաւ Բրիստոս. կանանց բազմութիւնն խլեց արանց ձեռքէն, և կուսութիւն, և ՚ի կնոջէ հրաժարիլ՝ սրբութիւն համարեցաւ. ասոր համար նուազեցաւ մարդ Հայաստանէն. Գանձ ունեցողին վա՛յ կարգաց, չունեցողին երանի՛. ասոր համար Հայաստան այսօր վերջին տեսնկութեան հասաւ. որը թշնամոյն մատնեց, և որը՝ իր մեծութիւն իրեն թշնամի համարելով ցրուեց: Ներողութիւն յանցանաց, արձակումն կապելոց, մահ իրենց անձը պահպանողներուն, և կեանք իրենք զիրենք մահուան մատնողներուն աւետարանեց, յիմարութեամբ լեցուց աշխարհը. և խնլակորոյս եղան ողջ մարդիկ: Եւ ի՛նչ կ'ընեն այսօր քո վարդապետները, Վահէ, քո Յովսէփն ու Աւետիգ, քո Մահակն ու Մուշէն, բոց իրենց բերան առած հրեհնեցին վառեցին ամբոխին սիրտը. կ'ողորմիմ անոնց, կ'ողորմիմ. ուշակորոյս եղած, իրարու դէմ կատրած, սնոտի խօսքերով խաբուած, ձգած են ամէնքն իրենց տունն ու տեղը, իրենց առն ու տուր, իրենց շահն ու վաստակ, իրենց արան ու ցանք, իրենց կեանքն ու վայելք, սուր և գերանդի առած վազեր զիզուեր են, սիրելի գսիրելին կ'սպաննէ, հայր գորդին կը խողովէ, և այդքան է միայն իրենց ընկիւք. Հայաստանը վերջա-

պէս պիտի սպասի իր վերջին ճիւղերէն, աճա նազալրեց-
 ւոյ վերջին բարեք զինքը պաշտոյ ազլին. մոյի կրօնք,
 ո՛ւր է ասոր փրկութիւնը ո՛ւր է ասոր աւետիքը:
 Մարդիկներ կը նուատայնէ, հանճար, գուժ կը կու-
 րայնէ, և իրրեւ անասուն «մե-ի՛ք» կ'ուսուցանէ:

Պարսկին դէմ Հայն ի՛նչ պիտի ընէ.

Թագաւորին դէմ գերին ի՛նչ ընել կարող է:

Հապա սաս՛, Վահէ:

Վահն. — Գնա՛, կորի՛ր, անօրէն Սիւնեյցի, դնա՛
 մեռի՛ր սուրբ խաչի և Քրիստոսի ոտքին տակ. դնա,
 սատկի՛ր, անշորճք, աւետարանի շորճաց տոջև.՝
 որոնցմէ միայն կը պատկառիմ: և թէպէտ աճա՛ սըրտ-
 մբաութենէս կը սարսոխն ստիտներս բայց խաչին
 խորին խորճուրդէն, խաչերոյն ներգութենէն կը սան-
 ճուիմ: Նախատի՛նք կը դնես Քրիստոսին, արճամար-
 հանք կը կարգաս սուրբ Աւետարանին, կ'անարգես
 փրկագործ խաչն, որ մարդկանց անարգութիւնը բար-
 ձառ, եկեղեցին որ զմարդիկ կենագործեց: Այո՛, Սիւնե-
 ցի, մենք այն Քրիստոսը կը պաշտենք, որ մեզ ուսոյց,
 կեանքը՝ մաճ համարել, և մաճը՝ կեանք: Մի՛թէ քո
 տեսած և լսած մարդիկներէն կայ մէկը՝ որ չը մահա-
 ցաւ, ասա՛ ինձ: Իսկ ո՛վ որ ՚ի Քրիստոս կը մեռնի,
 նա կ'ապրի: Ո՛րն է կեանք: Կեանք կը համարիս արե-
 ւու ներքեւ ապրողներուն, որոնց ամէն օր, ամէն
 վայրկեան, ամէն տեղ ու ամէն վիճակ ազէտալի է,
 չարեօզ լի, և անցաւոր և կորստական՝ աշխարհիս
 ամէն բան մարդոց համար: Ո՛վ ունեցաւ և իսպառ
 վայրկեց, ո՛վ սիրեց և յագեցաւ, ո՛վ մեծացաւ և
 չինխաւ, ո՛վ բարձրացաւ և չըկործանուցաւ, ո՛վ թա-
 գաւորեց և անտաճ մնաց, ո՛վ ծնաւ և չուսաւ: Կը
 մեռնի քրիստոնեան ևս, այլ անոր յոյսը լի է անտա-
 հուժեանք, նա նոր և յաւիտենական կեանք մը կ'սխի
 իր մեռնելուն օրը, և ասոր համար մխիթարութեամբ

և սրբախոսութեամբ կը վարէ և կը կնքէ իր երկրաւոր
 ու սանձանաւոր օրերը: Բայց սուրբ եկեղեցին մարդոց
 ճարքով հիմնուած չէ, որ մարդոց ճարքով յողմուի-
 մարդոց ձեռքով շինուած չէ, որ մարդոց ձեռքով
 կորճանի. թագաւորի տուած պարգև չէ, որ թագաւոր
 գանձից խլէ: Աստուծոյ տուրք է եկեղեցին, սրոյ
 հիմունք երկնից վրայ դրուած են, սրոյ շինուածքը իր
 հաւատացելոց սրտի և հոգւոյն ճեռ չաղախուած են:
 Աստուած կայ յաւիտեան. իր եկեղեցին կայ
 յաւիտեան. Հայեր այս եկեղեցւոյ զաւակն են և
 Քրիստոսին կը հաւատան, սերնն Հայեր կան յաւի-
 տեան. Եկեղեցին զթագ չի՛ փչրեր, եթէ թառուօրն
 անարժան և իշխանքն զաւաճան չը լինին. այլ ընդ
 հակառակն, եկեղեցին իր գաւակները ամէնէն ալ
 թագիւ կը պատկէ, կ'ազնուայնէ, կը բարձրացունէ
 աղքատը մեծատուն կ'ընէ, երանի՛ կու տայ անանկին.
 սերնն մեծատանց թէ՛ համի չէ՛ եկեղեցին՝ թէ՛ մեծա-
 տունք անիրաւ չըլինին: Տկարին քաջախերս կը արդայ,
 անկեղոյն յարութիւն, ծոտային՝ աղատութիւն, յանցա-
 ւորին՝ ներգութիւն. ոչ աշխարհն վեր ՚ի վայր ընելու
 համար, այլ բոլորն ալ հաւատար քաջ, հաւատար արի,
 հաւատար ազնիւ, հաւատար ազատ, հաւատար մեծ,
 և միմիանց ներողք. միմիանց սիրողք ընելու համար:
 Այ Սիւնեցի, կ'ըսես թէ մարգս շատ կնիկներ պէտք է
 ունենայ, սակայն մէկ Ազգայն մէկ կեայ, և մէկ ար-
 գանդէ անթիւ մարդիկ ծնան: Նայի զարը լիչէ,
 բազմացան այն գարշելիներ, թէ իրենց անձանց հետ
 և բոլոր հոգադետիս արսկանութեան պատճառ եզան:
 Մեք այն Աստուածը կը պաշտենք, որ վերբանամ
 հարստացոյց և ոչ աղքատացոյց: Բայց պէտք է որ
 մենք ալ Արբանամ լինինք: Մեք այն Աստուածը կը
 պաշտենք, որ ծովը ցամքեցոյց, զի՛սրայել ազատ
 անցոյց, Փարաւօնը ցամաքի ջրերով խեղդեց: Մեք այն
 Աստուածը կը պաշտենք, որ՝ գրաւիթ, տղայ, աղքատ,

և հովիւ թագաւոր պատիւը: Մեք այն Աստուածը կը պաշտենք, որ զՍողոմոն և Բարայէլի տունը օրհնութեամբ ճոխութեամբ և մեծութեամբ լցոյց: Այն Աստուածն է Հայաստանի Աստուած, որ զժողովուրդ գերի կը վարէ, կը չարչարէ, և թշնամին զնա կրալի մէջ կը ձգէ. բայց չի թողուր, Աստուած չի թողուր որ վառի: Յիշէ երեք մանկունք: Աստուած այն Աստուածն է Հայաստանին, որ մեռաւ և յարեաւ. և մեք կը հաւատանք որ մեռնինք ու յարութիւն կ'առնունք: Աստուած այն Աստուածն է Հայաստանին, որ խաչին վրայ անարգուելոյաւ և փառաւորեցաւ. և մեք կը հաւատանք թէ մեր եկեղեցւոյ համար անարգուելի փառաւորութիւն է սեզ: Աստուած այն Աստուածն է Հայաստանին, որ անչնչելոյաւ և արիւնջուայ ինկաւ, բայց կը գոռար, «Քաջալերացարձեք, ևս յազթեցի աշխարհի», այս՝ Հայաստանեայց ժողովուրդ իր արեան հոսանաց հետ կ'աղաղակէ Քաջալերութիւն և կը յազթէ վերջապէս Յազկերտին: Բրիտանացիութիւնը, ճշմարիտ Աստուածապաշտութիւնը անմահութիւն է մարդոց: Աստուծոյ սէր, Բրիտանիան սէր քան զմարմին իրաւորներ առաւել քաջ ու աներկիւղ կը գործէ զմարդ: Այն անձին ծերութիւն չկայ, այն ազգին վախճան չկայ. անոր համար իր հայրենիքն երկինք համարուած է, և երկինքն իր հայրենիք եղած է. երկինց Աստուածը կը պաշտէ, իր հայրենեաց հոգը կը պաշտէ, որոյ վերստ երկրպագութիւն կը մատուցանէ Աստուծոյ, և իր շքութունքները կը քսէ Աստուծոյ անունը յեղեղելով: Սիրելի չկայ անոր համար երկրիս վրայ. իրեն սիրող յագեցած է, և լեզուն Աստուծոյ սիրով միայն, կինն այնպէս, այրն այնպէս. և ոսկին և արծաթ և փառք և մեծութիւն, և կեանք և վայելչութիւն անոնց համար եկեղեցին է միակայն երկրիս վրայ:

Զարեհ.— Աստուածարանութիւն կը կարգաս ինձ

համար, Վահէ, գիտեմ ևս ատոնք, կը զողամ քո սրտութիւնէն. եթէ կ'անաք, և եթէ կը ներէք, երկայնատութեամբ խօսինք:

Վահէ.— Խօսեցէ՛ք, բայց ոչ ամբարտաւանութեամբ, ակն ածելով սուրբ հաւատոյն, և հայրենեաց պատուոյն:

Զարեհ.— Վահէ, հաւատքը թո՛ղ սուրբ համարուի, բայց Հայրենիք բառը դեռ իրաւունք կայ միթէ Հայուն կոչելու: Հայաստանը իր հարցն իշխանութիւնն ու կենդանութիւնը տուաւ Շապուհին, և այսօր անոնց գերեզմանները միայն մնացին իր ծոց: Հայն իր իշխանութեան հետ իր հարց անունն ալ կորսնցուց, և հարց անուանց հետ իր հայութիւնն ալ հետեւարար կորսուած է:

Վահէ.— Կորսուտ ինչ կ'ըսես, Զարեհ, ազգի կորուստ չկայ, և ազգի մը հայրենիք օտարի մը սեպհական Վի լինիր: Ազգ կ'ապրի իր եկեղեցւոյն մէջ, և թող գերի երթայ նա, թող ջարդուի, թող կարտուի, միլիոնաւորներէն թող հարիւրաւոր մնայ, նա իր Աստուած ու իր հայրենիք իր սրտին մէջն ունի. կը կողոպտուի մարդոց գանձ, կը մերկացնեն անձին զարգարանք, բայց չեն կարող անոր զգացմունքը կողոպտել, քանի որ կայ այն ազգը, կը յիշէ իր հայրենիքն, և քանի շատ չարչարուի ազգ մը, այնքան կը մօտենայ նա իր փրկութեան, իր հայրենեաց զրան: Շապուհ տիրեց այս՝ Հայաստանի հողերուն, բայց ոչ Հայոց սրտերուն. Յազկերտն հարկեց ժողովրդեան անձինքը, բայց ոչ անոնց հոգիք: Տե՛ս, Զարեհ, տե՛ս, մնացորդը Հայոց ինչէ՛ր կը գործեն. տե՛ս, քանի՛ ըլլեր մող և Պարսիկ ջարդեց Վանանդայ եկեղեցին, և Վարդանն Հայոց գլուխ անցնելով, և սուրբ քահանայք Հայոց առաջնորդ կանգնելով, քո պերճացած բազմութիւ ու հօր Պարսիկներն ինչպէս ջարդեցին, այսօր

Հարկը տէր են բոլոր Հայաստանին: Ահա՛ Արտաշատն մեծ իր աւաններով, և անաստոյ: բերդերն Գառնի, Անին, Արտաքի ու իրենց աւանները. Երկայնորդն ու Արճնին և իրենց աւանները. Բարձրաբուզն. Սորանիստըն, Մխանիստն, անկասկածելին Աղականն ու տունց աւանները. անուանին Վանն ու իրեն աւանները. Գրուհայն, Կապոյտն, Արտնն ու Վասակաշատն, այս ամէնը որ երէկ լցուած ու ամբոցած էին Պարսիկներով, կրակով ու մոխրով, այսօր Վարդանայ սուրն ու ժողովրդեան բազուկը տիրեցին, քանդեցին, տալաթեցին, և նորէն սուրբ խաչ, նորէն սուրբ սեղան, նորէն Աստուածօրհնութիւն այն տեղերը լցին: Կը տեսնես, կրօնք, ճշմարիտ հաւատքը ինչ կ'ընէ զմարդ. քիչով շատերուն կը յաղթէ, տկարներով հօգորները: Գու գիտես, թէ քանի՛ քանի մեծամեծ բերդեր միայն աղօթելով և խաչին նշանաւ ինկան կործանեցան: Գու իսկ գիտես Ամատունին ատանձար, այն խաչիւ պատկեալ նաճատակն, ինչ յաղթանակներ վարեց Հերաց բանակին մէջ: Ազգ մը՝ որ ոչ թագաւոր ունի, ոչ ընկեր ոչ պաշտան և ոչ ապաւեն, այսպէս ոգեւորուած լեռն ու ձոր թշնամոյն դիակներով լեցոյց, սոսիսն արիւնտով ներկեց, և այսօր Աղուանից աշխարհը փրկելու կը վազէ. ահա՛ գնաց Վարդանն իր բանակով, իմ տէրն Արշաւիր անօր նիզակից: Ես գիտեմ, ևս կը հաւատամ իմ Աստուած, որ պիտի լսեմ թէ՛ Հայերն այն տեղն ալ քաջացան, Հայեր Պարսից յաղթեցին, Հայեր Աղուանք փրկեցին: Բաց քող Սիւնեցին, քող անիծեալ Վասակը՝ դեռ կը շարունակէ իր ամբարշտութիւնը, իր գաղանթութիւնը. դեռ ուրացութեան պատմուճան վրայէն չը մերկացաւ, խարեց չ'նստուած, երդուաւ և սոսեց սուրբ աւետարանին, և այսօր Սիւնեաց որդիք, արքունի զօրքը իր ձեռքն առած, աւեր, գերութիւն, պղծութիւն, ստութիւն, սպաննութիւն կը գործէ իր կղբարց մէջ, իր հայրենեաց մէջ. Վասակին սատկումը ևս պէ՛տք է տեսնեմ:

Զարեհ. — Վահէ, զու գիտես որ ևս վաղ ձգեր եկեր եմ Վասակայ ծառայութեանն. բայց այս մասին մէջ, իմ խորհուրդս ներք՝ որ քեզ յատենմ: Վասակ խիստ քաղաքագետ և խելացի և Ազգին փառաց նախանձախնդիր մէկն է. Վասակայ ըրածները Հայաստանի բարիք են. եթէ Վարդան և Արշաւիր և ներշնչուած և միւս նախարարներ չը խորուէին քաճանայից, այլ առ ժամանակ ընդունէին մնային մոգութեան մէջ, եթէ այն սարսափելի ջաղը մագաց և զօրաց չը տային, այսօր Հայաստան իր կորանցուցած իշխանութիւնը ձեռք բերած էր. ինչ մեծութիւն քան զթագաւորութիւն, ինչ ցանկալի քան զգանձ և սրբաւ. սառնք ամենը ո՛չ միայն խոստացած էր Յազկերտ, այլ և զրեւած էր այն մագաց բազմութեան հետ. սակայն՝ առ ոսն կոխեց, այս ամէն բարիքներէն և շտրճքներէն զրկեց Վարդանն զՀայաստանը, և խեղճ ժողովուրդը կտու ձգած ՚ի մահ կը վարէ. մեռցնելու կը տանի բերէ: Այսպիսի ժամու մը մէջ կրօնք խնդրելու է, և կրօնքի համար Ազգ մը կորսունցունելու է. ահա այս է քո Վարդան, այս քո քաճանայք: Իսկ Վասակ եթէ տակաւին կը գերէ, կասպատակէ այս տեղէն այն տեղ, դարձեալ իր նպատակը շահաւէտ է ազգին. թող կորսուին քանի մը տուններ, թող չ'խոււի ամբողջ հայրենիք: Կեցցէ իմ Վասակ:

Վանն. — Ի տարտարոս, ՚ի սանդարամետ, ՚ի գող Բէլիարաց, և անոր մարտին անգամ Հայաստանի սուրբ հողին չարժանանայ. չուներ լափեն անոր գիւակը, որդեր եռան անոր կոկորդին մէջ, սրայթի գարշելույն որովայնը, ապականի անոր ողջ անձը, տեսնես զինքը անցաւորներ և նոզիք կարդան անոր, տեսնես և փոխանակ կարեկից լինելու սանահար լինին, պատճեն իրարու, և առակ նշաւակ համարուի ազգաց և ազանց մէջ. տեսն՝ Վասակայ արժանի վախճան. ահա՛ ըզՔրիստոս

ուրացող, անա՛ հայրենեաց դաւաճան, անա սուրբ
 Եկեղեցւոյն թշնամի, անա ճշմարտութեան հակառակորդ,
 ազգին մատնիչ, եղբարց խողովիչ, կեղծաւոր, փարասէր :
 Վասակն իր Աստուածը ուրացաւ որ զինք ստեճեր էր .
 Վասակն զԲրիտոս անարգեց, որ զինքը իր Աստուա-
 ծային արիւնտով էր ներկեր . սուրբ Աւագանը մոռացաւ,
 որ զինքը երկնից էր սրղեգեգրեր . բոլոր չընորճքներէն
 մերկացաւ, որով ինք պատկեր Աստուծոյ և ժառանգ
 Արքայութեան էր եղեր . Վասակը սուրբ եկեղեցին
 ապականեց, որով ինքը օրհնուած էր . Վասակը պիտի
 չսպրի իրբեւ մարդ, և անոր մահ չարաչար պիտի լինի :
 Մարդ որ իր կենսատուն կը մերժէ, իր եղբայրները կը
 դաւաճանէ, իր ծնողը կը մեռուցանէ, իր բարերարները
 կը մտանէ, հաւատարմութիւն, ճշմարտութիւն, սէր,
 գուժ, և ամէն կերպ մարդկային ու քրիստոնէական
 սրբազան ձիրքերը ու պարտքերը իր հոգիէն կը թփա-
 փէ . Հայեր խնայեցին իրեն . նա նենգութիւն գործեց,
 սուրբեր ողորմեցան իրեն . նա այնպիսի սոսկալի ոճիր-
 ներ գործեց, նա Աստուծոյ ահաւոր ձեռքէն սարսափելի
 և հանգիսաւոր հարուած կ'ընդունի : Ո՞վ չէր զիտէր
 այդ օճին խորամանկութիւնը, բայց ներեցին երեն, և
 դա այնչա՛ի երախտեաց դէմ անոնց ընտանիք գերի կը
 վարէ : Թող գայ միանգամ, թող մօտ գայ Կամսարա-
 կանի տան Վահէն պահեր է անոր արեւուն հարիւր
 կշիւր վաղակաւորն : Եւ դու Չարեն, արդարեւ Սիւնեցի .
 օգտակար կը համարիս Հայաստանին համար այդ խոր-
 հուրդ . ու ինքն բարի ու չնորճալի մարդ քան զՎար-
 դանն : Ի՞նչ համեմատութիւն . Վարդան՝ Գարբիէլ, Վա-
 սակ՝ Սաղայէլ : Նման է ճիշդ քո բան եթէ մէկը բարի
 ասէր չար սատանային որ խոստացաւ Ազամին Աս-
 տուած լինել, և խարեց զրկեց զիս իր բարեքներէ :
 Յաւիտեան դատապարտեալ զեւն յաւիտեան դատա-
 պարտեալ Վասակն : Միթէ կը փոխարկէ մարդ իր

լուսատու աչքը անարգ մետաղին հետ, կեանքը
 հանդերձի հետ . հաւատքը կը փոխուի գանձին հետ,
 եկեղեցին երկրաւոր պարգեւաց հետ : Գնա այդ յիշա-
 տակարանը ուրիշ երկիրներ փնտրէ, առաքիլի Հայն
 այդ վատութիւն չընէր . գնա՛ Վասակայ ճակտի վրայ
 կարդա այդ սեւ մահարձան . Վարդան սուրբ է . և եթէ
 մեռնի նա, մեռնի Վարդան, կրկին պիտի կանգնի
 Հայաստան :

Չարեն . — Ապագան կը վճռէ . երբ այս մրիկները
 դադրին, այն օրը կը կարդանք մեր կարծեաց վճիռը :

Վահե . — Հազարաւոր տարիէն ետքը եկող հայկական
 սերունդին սրտէն կը կարդամ իմ վճիռս . Մասիսի
 անմահ կողերուն վրայ կը քանդակեմ ևս Վարդանայ
 անուն . եկող Հայեր թող կարդան թէ՛ Վարդանն և
 ճշմարիտ Հայեր յանձն առին եկեղեցին և Հայրենիք
 փրկելու համար մեռնիլ . Թող կարդան Վասակն ու
 իրեն նման նենգաւորներ յանձն առին իրենց ճակատը
 պատկելու համար . զանձ և պատիւ ստանալու համար
 զԱստուած ուրսմալ, եկեղեցին սպանել, հայրենիք
 կործանել : Բահանայք թող կարդան թէ՛ Ղեւոնդն և
 Յովսէփ Բրիտոսի հաւատքը պահպանելու համար,
 ազգը յաւիտենական կորստէն փրկելու համար Վար-
 դանին աջակից . Հայոց մարտադիր եղան, յանձն առին
 սուրբն դէմ իրենց կուրծքն ու պարանոց պարգել . Թող
 կարդան Պետրոս և Չանգակ երէցներ Վասակին ար-
 բանեակ եղան, յանձն առին կամաւ երկնաւոր և ան-
 մահ պատկէն զրկուել, երկրաւոր փառաց և մեծութեան
 հաննելու համար սուրբ հաւատքն առել, եկեղեցին
 արիւնտով ողողել . Ոչ, Յազկերտ, ո՛չ, դու կարող չէիր
 Հայաստանին մատ զարնել, եթէ Վասակ, քեզ չառաջ-
 նորդէր : Եւ ոչ դու Վասակ, դու կարող չէիր եկեղեցոյն
 վնաս մը բերել եթէ սուտ քահանայք քեզ չէին ծառա-
 յէր : Ո՞վ քահանայութիւն, որ ՚ի սուտն և յուղիղ
 միայնգամայն գորաւոր ես : Երկու քայր ալ արձակենք

Յունաստանի ճակատին, որ մորցաւ Քրիստոսի սէր, թողուց եկեղեցոյ սուրբ ուխտը նախապատուեց իր շահն, փոխանակ Հայոց օղնելու, դաշինք կ'աւելց մտերմապաշտին հետ: Թող մնայ, Յունաստան, այս ալ քո նենգութեան յիշատակ թող մնայ Հայաստանի մէջ. Քրիստոս գտակ գրեց. Հայերն ալ թող ճանաչեն գրեց: Ահա 'ի Քրիստոս կորայր, բայց 'ի հաւատոս օտար: Հայեր, զուր էք ձեր սպաւէն, օտարին չը յուսաք բնաւ. կրր կռուիք կրամ կ'ապրիք՝ օտարին ձայն մի՛ տար: Մտէք ձեր եկեղեցոյ մէջ, յուսացէք ձեր հաւատքը, կանչեցէ՛ք զՍեպտուած, նա միայն է հաւատարիմ ձեզ, նա միակ պաշտպան ձեզ:

Չարեն. — Արդաշես հաստ կոյ և յամառ Հայ ևս եղեր. վաճէ, և քեզ պէս կը տեսնամ՝ աճա բոլոր Հայերը. եթէ քեզ մը քաղաքազիտութիւն զխանայիք, եթէ քիչ մը իմաստասիրութիւն ունենայիք, աշխարհ ու մարդ ինչ են հասկրցած լինէիք, այսօր և այսուհետև կը ջանիկ մարդիկ էիք: Ազգ, հաւատք, հայրենիք, այս երեք բաներն են աճա՛ որ բոլոր մարդիկ մարդոց թշնամի են բրած, ընկեր ընկերին առկի, նման նմանին հարածից. և վերջապէս քանի՛ անգամ որ այս բաներ հեշուեր են մարդոց բերնէն, այնգան անգամ՝ արիւնհեղութիւն բրեր են մարդիկ իրարու գէմ: Ինչ ազգ: Ուր տեղ որ գտար մէկը քեզ բարեկամ, որ մարդը գրեց սիրոյ, այն քո Ազգն է: Ամէնքս ալ Ագամորդի չենք մէկ արիւնէ և մէկ հօրէ յառաջ եկած չենք: Ինչ հաւատք: Ո՛ր կրօնք՝ որ քեզ հեշտայի կը թուի, որ գրեց կը մեծացնէ, որ գրեց կը փարաւորէ կը բերկրեցնէ: Ո՛ր կարօտ գրեց չը թողուր, որ անխըւարի վայելի կուտայ արարածոցս ամէն բան ինչ որ կ'ուզէ մարդկային բնութիւն, որ չի պատժեր, որ չի սպաննատ, որ չի թշնամաներ, այլ միշտ կուտայ և կը ներէ, այն կրօնքը քեզ համար կրօնք համարէ: Ինչ

Հայրենիք: Ուր տեղ որ հանգիտտ պատիւ, ճոխութիւն, վայելք կը գտնես, այն քո հայրենիքն է: Միմէ այս հոգն ու այն հոգը մի և նոյն Աստուած է՝ ստեղծեր: Այսօր Պարսիկն այն ազդեցութեան տէրն է, որոյ զօրութիւն ծագէ 'ի ծագ երկրի տարածուած է՝ այսօր խեղացի մարդ կը խոտնուի անոր հետ, կը միանայ անոր հետ, ազգը՝ անոր ազգ պէտք է լինի, կրօնքն՝ անոր կրօնք կ'ընդունի. և յայնժամ իրեն համար հայրենիք է՝ ինչ տեղ որ լինի: Այսօր Պարսիկին, վազն ալ այն ազգին որ մի և նոյն ազդեցութիւն կ'ունենայ: Յազկերտը բարերար կը համարիմ ևս Հայաստանին, որ զրկելոյն այց կ'աննէ, անկելոյն ձեռն կուտայ մերկացելոյն գանձ կը բաշխէ, տկարն կը յարուցանէ. սակայն անմիտ Հայեր իրենց օգուտը արհամարելով, փոխանակ անոր չընործքները ընդունելու, անոր սուռն իրենց վրայ կը հրաւիրեն և իրենց պարանոցը զենաման կը նուիրեն:

Վանկ. — Ամբարշտեցա՛ր, Չարեն, անզգամայար քան զչափն առաւել: Յազկերտին ո՛չ խորհուրդ և ոչ գործքեր կրէք. բարի են, սակայն ամենաբարին Աստուած անոր չարութեանց վրայ բարիք կը կառուցանէ. Յազկերտ Քրիստոսի եկեղեցին քակել կը կարծէ, ընդ հակառակն իր ձեռք նորէն կը շինէ, նորէն կը հաստատէ: Յազկերտը Հայաստանէն Քրիստոնէութիւնը բառնայ կը կարծէ. ընդհակառակն 'ի նորոյ անոր սէրը ամէնու սրտին մէջ կը զարթուցանէ, ամէնու հոգւոյն մէջ կ'արծարծէ: Յազկերտը սուրբ հաւատոյ հետ և Հայուն անուն, Հայ ազգը, Հայաստան կոչուով կը կարծէ ջնջիլ, Պարսից գաւառ, Պարսից մասն կ'ուզէ անուանել, ինչպէս որ զուռն ալ կը կարծէս, Չարեն, այլ ընդհակառակն այս ազգը իր սեփական Հայկական անուամբ 'ի նորոյ կը պտակէ, այս աշխարհը իր ազատական և անսահական անուամբ 'ի նորոյ կը յորջորջէ: Այո՛, ազգի մը վրայ հալածանք հանել՝ այն ազգին

կեանք զարթուցանել ու անոր սրտին մէջ սահուած կրակ բորբոքել է: Ժողովրդեան մը հայրենեաց թշնամութիւն ընել՝ անոր ծոց ննջած առիւծները գրգռել. անոր լեռ ու ձոր կենդանացնել. անոր ջուրն ու հող կատղեցնել ու իր վրայ յարուցանել է: Առաւել ևս հաւատոյ հայածիչները, որք երբ իրենց որսական գործիքներ և գէնքեր առաց կ'ընթանան եկեղեցւոյն վրայ, հոն երամացած խաղաղիկ մնջիկ նստած միամիտ աղաւնիք՝ մէյմէկ հրացայտ վիշապներ կը տեսնեն, որոնք չչալով, գոռալով կը յարձակին՝ Յաղթանակ կրօնից, յաղթանակ ազգային, յաղթանակ հայրենեաց որոտալով. և այս ձայներն ու գոչումն կը կրկնեմ այս տեղ, որ պատոհմ քո սիրտը, Չարեն, քո սիրտը որ լցուած է անկրօնութեամբ, ցամքած է ազգասիրական զգացմունքներէ, և հայրենեաց գուլթ ու յարգանք բնաւ չունի իր մէջը:

Չարեն. — Թող Վահէին մահ և թշուառութիւն լինի բաժին. իրեն հետ և իրեն պէս անմիտ Հայերուն. այո՛, թող Բրիտոս. Հայ և Հայրենիք կանչեն ու ինչան մեռնին. սակայն Չարենին պսակ, գանձ, արեւ, առիւծանշան, ոսկի, կին, տուն, ծառայ, կեանք, խրախճանք. վայելչութիւնք ու բերկրանք. Թող Վարդանայ հետ Վահէն մտնէ գերեզման, թող Վասակայ հետ Չարեն թագաւորէ Հայաստան:

Վանե. — Այո, թող մեռնիմ ես Վարդանին հետ, զոր երկինք, հայրենիք և ապագայ Հայոց սրտերը պիտի պատուեն անմահութեամբ: Վարդանն եթէ մեռնի, Վահէն եթէ մեռնի, հայրենիք և սուրբ հաւատքը պաշտպանելու համար կը մեռնի, և անոնց արեան կաթիլն անգամ զուր չանցնիր. անոնց ոսկորներէն ու արիւն առիւծի կորիւններ կը յառնեն (Ներսէս եւ Հրահայս կուգան ներս). Ա՛հ, վատ Չարեն, նայէ՛ այս հրեղէնները. (քեւերուն ակ կ'առնէ գգուանօք):

ասոնք կամսարականի արիւնն են. Արշաւիրն ասոնք ծներ, Աստուած Արշաւիրն ասոնք սուեր է, որ Հայաստան ասոնցմով պաշտպանուի, փրկուի և ուրախ լինի. ասոնք կը սնանին Յազկերտի թոռներուն մահարեր:

Ներսէս եւ Հրահայս. — Հայր, Վահէ, չեկա՞ւ մեր հայրիկ, չեկա՞ւ մեր Վարդան քեռին: Չէ՞ մեզ կ'ըսէին, Արադածին ծաղիկները չը թափած կը դառնանք, Երասխին ափերը չիջած, ջուրը չը նուազած՝ կը դառնանք. ա՛հա՛ արագիւն ալ գնաց, ա՛հա բուրաստանն ալ կը խաժրի, և ծառերն ու որթը իրենց պտուղները հասուցին, հաւաքեր կը քաշուին իրենց երկիրները, մեր հայրիկն ո՞ւր մնաց, չը դարցաւ տակաւին: Վահէ, ասա մեզ, ի՞նչ լուր ունիս, ե՞րբ կուգայ Վարդան և ե՞րբ Արշաւիր. ասա՛ զարդարուինք, մեր թուրեր կապենք, մեր զենքեր հագնինք, սաղաւարտ դնենք, նժոյքներ հեծնենք, կտրիճ Հայոց հետ մէկտեղ դէմն ելնենք:

Չարեն (Մեմբալով). — Խեղճ տղաքներ, խեղճ ծերունի. Արշաւիրն ալ ո՞ղջ կը դառնայ. Վարդան ալ արեւ կը տեսնէ. անոնք արդէն Աղուանից լալկաներուն ձեռքն են, անոնց դիակներուն վրայ ողբեր կը կարդան. Վասակն զանոնք խնդամահ ընել տուաւ: Խե՛ղճ տղաք, անհայր մնացիք, անհայր:



Յանկարծ դրդիւն մը, եւ քանի մը հոգի ներս կը մտնեն. —

- Ողջոյն քեզ Վահէ,
- կեցցէ՛ Հայաստան,
- Հեցցէ՛ մեր հաւատք,
- կեցցէ՛ Մամիկոն Վարդան,
- կեցցէ՛ Արշաւիր կամսարական:

Յաղթեց Հայն,
 Խորտակեցաւ Պարսիկ,
 Փրկեցաւ Ազուն
 Բարձրացաւ սուրբ խաչն,
 Կործանեցաւ Ատրուշան :

Կուգայ Հայոց բանակն աւարաւ,
 Կուգայ ցնծութեամբ և յաղթանակաւ,
 Ձէնք, սուր, գանձ, դերի, և միւրք, անթիւ,
 Կու գան զԱստուած օրհնելով և աղաղակաւ :
 Փախաւ օձն Վասակ, փախաւ ծակէ ծակ,
 Տարած գերիներն և աւար թողած .
 Անա՛ ընտանիք մեր նախարարաց,
 Անա՛ տարած գանձն ամէնքն ևս կու գան,
 Ելէք, Վահէ, բշտապ վազեցէ՛ք
 Քաջաց դէմ գնացէ՛ք, բանակ զխտեցէ՛ք .
 Թնդացին լեռներ, չարժեց դաշան ու ձոր,
 Երբ տեսան Հայոց հանդէս փառաւոր :

(Ներսէսն և Հրատ կը խայտան դեպ ՚ի տուն կը վազեն, Վահեն ցնծութենէն արտասուք կը հեղու, և արտի կրակէն կասղածի պէս իր շուրջը կը նայի : — Ջարեհը լռիկ և դեղնած դեմքով դուրս կը սողոսկի: Վահէ, լեզուն կարկամածի պէս բիշ մը կը լռէ յայտնոյ յայնկոյս նայելով, և յանկարծ կ'աղաղակէ). — Ո՛ւր կորաւ, ո՛ւր գնաց, ո՛ւր է անդգամն, Ջարեհն ո՛ւր է. այսօր, այս տեղ մատաղ պէտք է տնկ անոր արեւը՝ Հայոց քաջութեան, Խաչին յաղթութեան, հայրենեաց փառաւորութեան: Սո՛ւր մը ինձի, Ջարեհն ինձի. ըրէ՛ք, բերէ՛ք... : Աստուած Գրիգորի, Աստուած Ներսիսի, Աստուած Սահակայ, Աստուած Վարդանայ, Աստուած Հայաստանի, քեզ իմ խոնարհ երկրպագութիւնն զոհութեամբ սրտի կը մատուցանեմ :

Դու ալ, ո՛վ Մասիս, քո ավաւր ողին իմ խառվեալ ոգւոյն հետ ցնծութեան փոխէ : Սրագուծն ու իր ճեղքած գագաթի, Սրարսանն ու իր պատուտած սիրտը, իմ բեկեալ երկամանց հետ թող երկնից ցօղալ զուարթանան :

Հտեցէ՛ք, ջրեր, երասխին ափեր, հասցէ՛ք, իմ աչքեր, ուրախութեան արցունքներ : Նաւակատիս թող կատարին, օրհնեն զՏէր բարձր հայեր, կաթընկերն մինչև գերզմանին ձերը, օրհնեցէ՛ք զՏէր, և ցնծացէ՛ք անոր առջեւը : Ձեր պաշտած կրօնքը սուրբ էր, հզօր էր ձեր հայրենեաց և ազգին սէր, յաղթեցիք և պիտի յաղթէք կրօնից և միութեան սէրը ճանչցէ՛ք, գայն պիտի պահեցէ՛ք :

Օրհնեալ է սուրբ կայն, օրհնեալ և խաչկալն Աստուած :

Գ. ՄԱՍԻՆ

Վարդանայ և Մուշկանայ մեծ պատերազմը կատարուէր է. Շաւարշական դաշտը արիւնով և զինակներով լցուած, Վարդանը իւր հայրենասիրութեան և Քրիստոսասիրութեան նահատակութեան սուրբ պատկերն ընդունած է իւր քաջ նիզակակցաց և առաքինի ընկերակցաց հետ մէկտեղ. ողջ մնացած նախարարք Հայոց՝ ամբացած Հայաստանի այս և այն բերդերու լեռներու և ամրոցներու մէջ, ու կը կռուին կը զարնեն, կը յաղթեն զեռ եւս Պարսկին: Վասակը՝ սուտ երէցներով և խաբեբայ ուրացող նախարարներով մեկտեղ կը չքնի ամեն կողմերը, սուտ յոյսեր տալով և մեծամեծ խոստմունքներով խաբելով, շատ տեղ պաշարում և բռնութիւն և աւեր և հրձիգ ընելով:

Ներշապուհ Ներծրունին, սուրբ ուխտին մեծ նախարարներէն էր, և պատերազմներուն մէջ կտրիճ ճակատամարտ, քաջուած իր բուն հայրենեաց մէջ ի Վասպուրական յիստան քաղաք, այն տեղ քաջութեամբ կը կռուէր Պարսից զէն. կը վանէր զանոնք, կը հալածեր մոգն ու մոգպետը, կ'սպաննէր կրակն ու կրակապաշտները, և Ռշտունեաց սուրբ Սահակ եպիսկոպոսին հետ կը պահպանէր կը սրբագործէր այն սահմանները. Սյուպիսի գործողութեանց հետ մէկտեղ Ներշապուհի միտք և հոգին անդադար կը յիշատակէր Վարդանայ և անոր հետի առաքինեաց անունը, կեանքը, գործը և փառաւոր մահը. և ահա այս զգացմունքն ու յիշատակն է մեր Երրորդ գրուածոյն զուոր:

Ստովմ՝ Ներշապուհին որդին կը դառնայ հօր մօտ, պատմելով իր ըրած սրբազան քաջութիւնները և կոտորածները Պարսկին, որոնցմով կը փառաւորվի հայրը և կը խրախուսէ ու կրկին կը վառէ զորդին ՚ի վրէժ Պարսկին և ուրացող Հային:

Շուանայ. Ներշապուհի հաւատարիմ և ծեր զինակիրը կը դառնայ Ներշապուհին մօտ, որ Շաւարշանայ մեծ պատերազմէն զինի միւս Հայ նախարարաց հետ Սաղտեաց լեռներուն ամրոցներուն մէջ անոնց հետ մէկտեղ կ'ամրանար ու կը պատերազմէր Պարսից զէն շատ քաջութիւն գործելով, կը դառնայ ողջանդամ չքնելով շատ տեղերէ՝ կը հասնի իւր տիրոջ մօտ, և կը պատմէ իւր ըրածները ու տեսածները, որով կրկին կը վառի Ներշապուհին հոգին ՚ի վրէժ Պարսկին և Վասակին: Հրաման կ'ընէ իւր գաւառներուն որ բանակ կազմեն, պատրաստուին երթան Հմայեկին մօտ Սաղտեաց լեռներուն մէջ, նոր կռիւ, նոր մարտ յարդարել. և ահա ձայն, լոյս, անուշահոտութիւն, հրեշտակաց տեսիլ, Վարդանանայ հոգիք կ'երևան յերկինք, որ Հմայեկի սուրբ հոգին առած՝ օրհներգութեամբ և փառօք կը թռչին առ Ս.ստուած: Կ'իմանան թէ մեռած է Հմայեակ: Ողբերգութիւն:



Գ. ՄԱՍՆ

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Ի ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՆ Ի ՅՈՍԱՆ

Արժուակին ներշարուն

ՎԱՐԴԱՆ .

ԽՈՐԷՆ .

ՀՄԱՅԵՆԿ .

ԱՐՏԱԿ .

ՏԱՃԱՏ .

ՆԵՐՍԷՂ .

ՎԱՀԱՆ .

ԱՐՄԷՆ .

ԳԱՐԵԳԻՆ .

Ո՛վ անմահ անուաններ . . . : Բաջ, կորովի, արի,
զարմանալի, խնայուն, հրաշակերտ, վեհ, զանազի,
յառաջադէմ . . . : Առազինիք, ո՛վ իմ ընկերներ,
մեռած և միշտ կենդանի Հայեր, ո՛վ երեսուն ու վեց
և հազար Հայ նահատակներ: Աւարայրի, Աւարայրի,
դաշտ գերեզմանական, դաշտ նուիրայիան. զո՛ հողդ
սուրբ է այսուհետև, դու քան գերկիւնքն եղար
առաւել: Քոյդ ծոց ննջեցին Հայոց արեգակներ, անոնց
մարմիններուն վրայ ելեւէջ կ'անեն Սատուած և հրեշ-
տակներ. ալ սկէտք չեն քեզ համար ցօղ և անձրեւներ:

ալ Հայոց համար ծագիկ մի՛ ծլիր. թող գան, թող գան
Հայոց աղջիկներ, քեզ մէջ չըջկու, վարդի տեղ
Վարդան խնդրելու, քաղցր մանուշակի տեղ Հայոց
արիւնը հոտոտելու: Իրենց կուսական ճակտին պսակ,
իրենց գեղեցիկ պարանոցին մանեակ՝ թող փութանակ
չուչանի՛ Հայոց քաջաց փչուած ոսկորներ հիւսեն,
և երբ ծիծեղն ու սարեկ կու գան քո կանանչներուն
մէջ զարունը գեղգեղել, թող Հայոց մանկտին ուսանի
անոնց հետ կանչել յեղեղել, արձագանք տալ և առնել.
Վարդան, Խորէն, Սրտակ, Ներսէհ, Հմայեակ, Տաճատ,
Արսէն, Վահան, Գարեգին, և երեսուն ու վեց և հա-
զար Հայեր, Հայաստանի սիրոյն, փառաց և կենաց
ընտիր մատաղներ: Դու Տղմուտ, միշտ պղտոր մնաս,
պղտոր ընթանաս. ինչ որ քո աչքովդ և քո շուրջ
տեսար, բնաւ չը մոռանաս. քեզմէ ջուր խմողին՝
Վարդանայ համը տաս, քոյդ տխուր պատ՛եր քոյդ
մանրիկ ու մեղմ՝ ալեաց վրայ գրուած յիշատակներ
ամէն Հայուն կարգաս, և վկայես, թէ՛ Խնչպէս քո
ցուրտ ծոցին մէջ, քոյդ թաց աչքերուդ առջեւ
քաջացան, կրուեցան, Հայրենեաց և սուրբ հաւատոյ
համար ամէն բան մոռացան, զարկին զարնուեցան,
փռեցին, փուռեցան, թշնամին ջարդեցին, ու իրենք
ինկան, Սատուած սիրող Հայեր, հայրենիք սիրող
Հայեր, և իրենց զօրաւար Մամիկոնեանն Վարդան:
Քեզ անէծք, ո՛վ Տղմուտ, եթէ մոռանաս այս իմ
ուխտ: Խցուն, ցամաքին քոյդ պղբերակունք, գքեզ
տեսնեն օրինակ առնեն հայրենիք մոռացողք, Հա-
յուէթիւն ուրացողք: Այլ դու մի՛ լար Հայաստան, թէ
մեռաւ Վարդան, քայց գքեզ սիրող, քեզ պաշտպան
Հայեր տակաւին շատ կան, վեջջինն քան զամէն
Ներշարունէն է, բայց իմ երէտէն դեռ բոլոր Պարսիկ
սարսափ կը կրէ: Հողմունք հայրենեաց, քանի կը
փչէք ՚ի Շաւարչան դաշտ, բերէ՛ք այն տոյգն տոյգն

Հայերուն հոգի Վարդանանց: Արձագանդ տուէ՛ք, ուսէ՛ք և կանչէ՛ք Արտուայ բարձունք, Վարագ Կորճեայք, և քարինք Մոկաց, Հայերը վառեցէ՛ք ՚ի բոց ՚ի նախանձ, ՚ի վրէժ Վարդանայ, ՚ի վրէժ Հայ քաջաց, հրապաշտ Պարսից ճետ ջնջել ՚ի վրէժ հաւատոյ, ՚ի վրէժ հայրենեաց:

Ո՛վ Աստուած, ո՛վ Աստուած . . . :

Ատովն.— Հայր իմ ներշապուէ՛ն

Ներշապուհ.— Որդեա՛կ իմ Ատովմ . . . — բայց ի՞նչ է այդպէս արիւնտտ պատմութեանդ, քրտնած քոյդ ճակատ՝ Ատովմ. ո՛ւր տեղէն կու գաս:

Ատովն — Այն տեղէն, ուր մեր բանակն է. քառասուն սեւ Պարսիկ մէկ ձեռքովս այս մէկ սուսերով շան սատակ ըրի, չորս ատրուշան միւս ձեռքս կործանեց. պիղծ կրակն ՚ի ծով գլորեցինք, տասն և ութ քուրմեր, մոզ և մոզպետներ ողջ ողջ թաղեցինք:

Ներշապուհ.— Բեր համբուրեմ, Ատովմ, քոյդ ազնուական ճակատը, բեր օրհնեմ որդեակ, քոյդ յաղթական բազուկը: Այսօրուրնէ քեզ կու տամ իմ բոլոր զէնքերս. քեզ ընծայ կու տամ, քեզ կտակ կու տամ այն զէնքերը, որ ընաւ չին սորված դադրել. երես դաձունել, այլ միշտ զարնել, միշտ ջարդել Պարսիկ, չար մարդիկ, սուտ եղբայրներ, կեղծաւոր քրիստոնեայք, խարող ընկերներ, հայրենեաց դուստանք, հաւատոյ թշնամիներ: Ատովմ, որդեակ, եթէ մենք խարուեցանք Վասակէն, եթէ Վարդան և սուրբ քահանայք ներեցին այն չարին, կրք ձեռք կը դնէք սուրբ Աւետարանին. բայց քեզ անմոռանալի և սուրբ կտակ մի կը նուիրեմ ահա՛, չը խարուիս դուն ալ, թէ Վասակ և թէ իւր սուտ երէցներ. ուր որ կը տեսնես զա՛րկ մեռցուր, չուներուն սուր անոնց ոսկորներ: Դու կը տեսնալիր, Ատովմ, թէ ի՞նչ կրակ ու բոց կտրած էի այն քանի անգամ, կրք Վասակ

կերդուէր. հազար կտոր կ'ուզէի ընել, բայց . . . բայց . . . բայց . . . ո՛վ Աւետարան, և սուրբ քահանայք: Դու տեսար թէ ի՞նչպէս ստեղ, ի՞նչպէս քակեց. սպաննեց Հայաստանի քաջեր, աւեր դարձոյդ հոյակապ և սուրբ տաճարներ: Գիտեմ, գիտեմ, Վասակայ դատաստան մեծ կ'ընէ Աստուած, և զայն պիտի տեսնեն մեր աչքեր, բայց քեզ կը պատուիրեմ, և սաս՛ դու քոյդ զաւակաց, և զաւակներդ իրենց զաւակաց, թող չը խնայեն, չը խարուին իրենք ալ Վասակայ հոգի Հայրէն: Ահ, ամէն ազգն իր Վասակն ունի, ամէն ժողովուրդն իր Վասակն ունի:

Ատովն.— Հայր իմ, Ատովմը ներշապուէ՛ն զաւակն է, քոյդ արիւնն է, Ատովմն ալ ներշապուէ՛ն է: Ատովմը կ'ուխտէ չը մոռանալ իր տեսածները, չը մոռանալ իր լսածները: Եւ դու քաջացիր, Արծրունեաց առիւծ, որ երեք կրեսուն տարիներ անյուշած ես գլխովդ, և միշտ յաղթուիմեամբ, միշտ Աստուծոյ և Հայաստանին համար արիական նուիրական պատերազմներով պսակած ես քոյդ զազաթը. կ'երդնում սուրբ խաչին վրայ, և այս ազի ծովն ու կապոյտ երկինքը՝ վկայ կը բռնեմ բանիս, արեանս վերջին կաթիլ, անձինս ամէն սիրածները, սրտիս բոլոր իղձերը զոհել, քոյդ առագիւնութեան յիշատիլը, հայրենեացս փառքը և սուրբ կրօնքս պաշտպանելու համար: Ձեր գերեզմաններ, հայր իմ, մեզ և մեր ապագայ սերնդոց անմահութեան պատճառ են. Շաւարշանայ հողը համբուրել, Տղմուտին ջուրը խմել, կենաց կենդանութիւն են Հայութեան. և այո՛, ձեր փոխներէն պիտի հանէ Աստուած ձեր հոգւով Հայեր, որք առ հասարակ վրէժիմդիր լինին Յազկերտին ու Վասակին, իւրաքանչիւր Հայն իւր զարու թշնամուոյն, իւր զարու Վասակին:

Ներշապ.— Եթէ, Աստուած չը կամեցաւ իմ արիւնս խառնել այն սրբոց արեան հետ, թող ընդունէ իմ ցամքած

աչքերէս հոսած արցունքներ, զորս կը հեղում սուրբ եկեղեցեաց վրայ, կը հեղում Հայոց ներկայ վիճակին վրայ: Տէ՛ս, որդեակ, Հայաստանի քաղաքներ ու շէնքերը բոլոր ամայացած, նախարարները՝ որը մեռած, որը լեռներուն գլուխները, ցորերուն խորշերը փոխած, ախիւնայք իրենց փափուկներէն ինկած, հարսները արագաստ թողած, առ հասարակ բերթեր, ամբողջներ, դաշտերն ու լեռները լեցուցած խոտարուտ կ'ապրին: Եւ զո՞հ սրտիւ կ'ապրին:

Գո՞հ սրտիւ կ'ապրինք, և տօր համար կը մխիթարուիմ ես: Վասնզի Աստուծոյ համար է այս ամէնը: Տեսանք, այո՛, տեսանք մենք մեր աչքք մեր քաջ նահատակներու սպաննուելը, մեր սիրելիներուն խողխողուելը, մեր գանձերը մեր ձեռքէն ձգեցինք, շատ մայր իր գաւկէն մահը իր աչքին առջև տեսաւ, շատ կոյսեր իրենց նշանածը, և շատ հարսներ՝ իրեն փեսաները մեռած թողուցին ու անչան. շատ ծնողաց գիրկերէն կաթնիկեր տըղաքներ ինկան ու ալ շունչ չաօին. բայց ամէնքն ալ մխիթարութեան հոգի զգեցած՝ Աստուած կանչեցին ու այն ցաւերուն յաղթեցին:

Լացինք մենք միայն և կուլանք մեր եկեղեցեաց քանդումը. լացինք մենք և կուլանք թէ մոռցուին այս մեր կրած ցաւերուն, այս մեր ըրած գործքերուն, և այս մեր ունեցած ու անցուցած օրերուն յիշատակները սպագայ Հայերէն:

Գրեց և կը գրէ Աստուծոյ մատը այս ամէնը իւր յաւիտենական սատունին մէջ, կը գրէ անշուշտ Հայոց սատմութիւնը իր էջերուն մէջ, և Հայաստանին հսկող հրեշտակը կը քանդակէ զայս Հայոց լեռներուն ու բլուրներուն վրայ: Կ'աղաչեմ, կ'աղաչեմ, քեզ ուղղած խօսքերովս ամէն ժամանակաց Հայերուն, որ կարգան, ուսանին, յիշատակեն և տօնեն Հայոց ազգութեան այս մահաբեր՝ բայց կենսատու յիշատակը:

Դեռ կայ, դեռ կայ մեզ շատ չարչարանք կրել, դեր

կայ մեր եկեղեցեաց քանդուելը և սուրբ քահանայից կապանքները տեսնել, դեռ կայ մեր ժողովրդոց գերի վարուիլ օտարութեանց, ստրկութեանց մէջ ցրուիլ, բայց այս ամէնը ո՛չ ազգ մը ոչնչացնել կարող են, և ո՛չ եկեղեցին անհետցնել:

Արտասուքս, կակիծս, և երկիւզս միայն այն ժամանակուայ Հայոց համար է, որոնք հանգիստ և ապահով օրեր կ'ունենան, բայց գիրենք հեշտութեան, անհոգութեան, անգիտութեան, և անձնասիրութեան տալով կը մոռնան իրենց ազգային կեանքն. ոչ անցեալն յիշեն, ներկան հոգան, ոչ ապագան պատրաստեն. այն օրն է ահա՛ ազգութեան մահ, և եկեղեցեաց վախճանը. այն է որ յառաջ կուգան տգէտ սուտ եկեղեցականք, այն օրն է որ յառաջ կուգան վատ ու մոլի իշխանք, այն օրն է որ յառաջ կուգան իրենց կամք պաշտող կոյր ժողովրդականք, որք առ հասարակ կամ օտարաց անձնատուր կը լինին, կամ ճարտարաց պատրաստական կերակուր: Աշխարհիս չըջանին մէջ, մարդկութեան կարգին մէջ կուգայ ժամանակ մը, որ սուսերին չըրած գործը լեզուն պիտի ընէ, արիւնով ազատուած ու պահպանուած կրօնք ու Ազգութիւն՝ անհոգութեամբ պիտի վախճանը զանէ:

— Այդ ինչ չառաջիւն, ինչ դժգոց է կը լսուի... :

Շառապ. — (Խուճը մը հետ կը գայ) Տէր իմ ներչապուն:

Ներշապուն. — Ո՛վ իմ Շառապ:

Շառապ. — Բոլոր Աղձնիք, Տօրիք, և Խաղտիք չըրջելով կու գամ... Այրարատու, Սիւնեաց, Բարձր Հայոց քաղաքներէն անցայ, ծուխ և մարախուղ այն ամէն տեղերուն միչև երկինք կը բարձրանայ. անօրէն Վասակ կրակը ձեռքն առած կը վառէ բոլոր շէնքեր, և երկու

բանակ հետն առած լեռներ և ամրոցներ կը դիմէ . բանակ մը սուտ քահանայից և ուրացող իշխանաց , բանակ մը Պարսից սուր ու բոց առած , հրովարտակ կը կարգայ , թողութիւն , շինութիւն կը խոստանայ Հայոց Յազկերտին կողմէն . սուտ երէցներ կ'երդնուն , ուրացող նախարարք էր յորդորեն , և Պարսիկը զանոնք կը խողխողէ . . . : Դարձեալ արիւն , դարձեալ սպաներազմ , դարձեալ մահ : Կսպոյտ լերան Հայերը մեծ ջարդ տուին պարսիկին , Սաղտեաց ամրակամները ջարդ ու փշուր ըրին մնացած Պարսիկները . Բակ Սիւ նեցին , այն խաչապըսակ քաջազն Հայկազուն՝ մոխիր դարձոյց հազարաւոր ճակատներ , և արիւնոտ սուրը բերանը բռնած վազեց ուրիշ կողմեր Հայոց օգնելու : Անոր հետ խառնուեցաւ գնաց քոյղ արիւնոտ Շաւասոյ . գետի մը ափունքներ խուճը մը Պարսիկներ տեսանք , և անոնց մէջէն լալեաց ու հեկեկանաց խեղճ հեծեծանքներ լսեցինք . Հայու ձայն էր մեր լսած , Հայ կանանց , Հայ աղջկանց , Հայ կաթընկեր մանկանց ձայն . . . գերի էին ինկիր թշուառները , և միմիայն իրենց ազատակն էր «Աստուած» : Կը լուին և կը մրմնչային վերստին «Աստուած» : «Աստուած» , մենք ալ գոռացինք Բակին հետ , և վրայ հասանք . ջուր , փոս , խորխորատ այն Պարսից բաժին մնաց . և մինչ թափեցինք գերիներ , մէկ գլուխ Պարսիկներէն ողջ չը մնաց : Այլ ինչ տեսարան , ո՛վ ողորմած Աստուած . ջրին հոսանաց մէջ երկու գեղեցիկ կուսանք , իրենց մագերը ջրի երես ծալ 'ի ծալ փոռուած , երկուքը մէկ կապով իրարու կապած , երեւէջ կ'ընէին ջրին տակն ու ջրին երեսը . դժու շունչ կար իրենց բերնի մէջ : Տեսանք , վազեցինք զանոնք վրկելու , բայց վերջինն էր այն շունչը . մահը քան զմեզ շուտ հասաւ . մէկ նուազ ու անուշ ձայնով մը կանչեցին զԱստուած , և հասան առ Աստուած . . . (Բոլոր տեսարանք կը մտմտէին եւ կ'աւսեն) Վա՛հ , վա՛հ . . .

Ներշապուհ . — Զինաւորուեցէ՛ք , քաջեր Շաւասոյ ,

մի՛ կայնիր , ձայն տու՛ր Անձեացեաց , ձայն Մոկաց , ձայն Ռշտունեաց , ձայն Կորդուած , ձայն Բաջրուենեաց , ձայն Բզնունեաց , ձայն Վասպուրսիկանի ամէն կողմերաց թող իջնան ամրոցներէն վար . թող գան ժողովին մէկտեղ . դեռ Հայը կայ ու կ'ապրի . թող գան իմ քաջեր , բանակ տամ քեզ հետ , Շաւասոյ ա՛ռ ու հասիր հիւսիսային լեռներ , այն տեղն է Հմայակ , այն տեղն Արշաւիր ասա՛ թող զօրանան , կռուին , զարնեն , ջարդեն , չը թողուն Պարսիկի մէկ վերջիս ճիւղը : Այնտեղ սուրբ քահանաներ , ասա՛ թող չը բաժնուին ժողովրդեան մէջէն . թող օրհնեն զԱստուած օրհնեն Հայոց զէնքն ու սուսերը : Ասա՛ թող խրախոյս առնեն Ներշապուհն ողջ է , այս կողմերը կը պահէ . Ատրպատականը ամբողջ ինձմէ կը սարսափէ մէկ բանակ զրկեր իմ Հեր և Զարեան ես ալ ա՛հա կ'երթամ . կ'երթամ կը յաղթեմ և կուգամ : Աստուած , որ կը տեսնէ իր ամենակալ աթոռոյն բարձրութիւնէն այս նահատակութեանց հանդէսը Աստուած պիտի տեսնել տայ վերջապէս մեր եկեղեցեաց շինութիւն , մեր կրօնից ազատութիւն , մեր աշխարհին վերանորոգութիւն : Այլսարճ մը , ազգ ըր որ ծագէ՛ի ծագ արիւն կտրեցաւ , արիւն Հայերուն ուղեցին բոլոր Հայաստանի դաշտն ու լեռը , գետերը կարմիր ներկեցան , դաշտն ու ձորեր գիակներով լեցան , քի մոռցուիր բնաւ այս տեսարան Աստուծոյ ամենատես աչքէն . անոր գթութիւն պիտի հանէ այս հողէն առ աւերիչ ձեռքը պիտի փչրէ այս սուրբ երկրէն այդ օտարին ոտքը , և պիտի յարուցանէ կենդանացնէ կրկին Հայութիւն , Հայութեան հետ քրիտոնէութիւն , քրիտոնէութեան հետ ազատութիւն , ազատութեան հետ անմահութիւն . . . :

— Այս ի՛նչ անուշահոտութիւն բուեց :

Միւսներ . — Անմահութեան հոտ է :

Ներշապուհ . — Այս ի՛նչ քաղցր ձայնը կը լսուին :

Միւսներ . — Հրեշտակներու եղանակ է :

Ներշապուհ.—Այս ինչ լուսաւորութիւն էր ծագեցաւ :

Միւսներ.—Լուսեղէն հոգիներ կ'երեւին :

Ներշապուհ.—Եւ ահա՛ Վարդան... .

Բոլորը մեկտեղ.—Ահա՛ մեր Վարդան... . և

Խորէն .

Արտակ .

Վահան .

Հմայեակ .

Ներսէհ .

Տաճատ .

Արսէն .

Գարեղին .

Ներշապուհ.—Եւ իրենց ասջեւ լուսեղէն հրեշտակներ պար բռնած , և իրենց գլուխ լուսեղէն պսակներով պսակուած : Իսկ այն ո՞վ է որ արիւնաթաթախ և լուսաթաթախ կարծիր և ձերմակ հագած և իրրեւ փեսայ հանդիսի մէջ առած կը ասնին յառազասա... : Այդ կերպարանքը Հմայեկին է նման . աչքերը պայծառ բոցավառ , բազուկն երկայն . կուրծք բացալսնջ , ճակատը լայն . և ձայն Վարդանայ «Նորայր» կը կանչէ , «Նորայր Հմայեակ» ահա՛ կը կանչէ : Չայն ամենեցուն Հայաստան կը կանչեն , Հայոց լեռներուն Ողջոյն կը գոչեն :

Հմայեակն է սյն որ պսակուեցաւ ,

Հմայեակ զնայ Վարդանին հասաւ :

.....



Ո Ղ Բ Ե Ր Գ

Թէ Հայրենեաց պսակազիր

Գողթնի քնարք լուր են .

Երկնից թող գան անմահ հոգիք

Հայոց քաջեր պսակի :

Մասեաց գագաթ թող գան բազմին

Երկնից գունդ գունդ հրեշտակներ ,

Աստուած իջեր 'ի Հայաստան

Հայոց արիւն հոտուել :

Փախէ՛ք ամպեր Շաւարշանէն ,

Այ մի ցօղէք ձեր ձօղեր .

Շաւարշանը ոռոգուած է

Հայոց քաջաց արիւնէն :

Եւ կը ծրլին ու կը ծընին

Այս գաշին մէջ ոչ խոտ , վարդ .

Այլ Վարդանայ ինկած երկիր

Պիտի ծաղկի սուրբ հաւատ :

Քանդակադարձ քաջ եղիչէն

Գրիչ 'ի ձեռն գայ յԱրտալ ,

Չափէ ձեւէ գրէ գրօշմէ .

Կեանք , մահ , հաւատք Վարդանասանց :

Ահ Վարդանայ անուան արժան

Մասիս կանգնի մահարձան .

Մենաստաններ կաշն 'ի գոթեթ

Աւետարան սուրբ սամար :

Ծագէ՛ արեւ քոյզ ճառագայթ

Խաղտեաց լեռներ , մութ խորշեր .

Այնտեղ ինկուէ քաջ Հմայակ ,

Այնտեղ պսակիւր նահատակ :

Հուսին, լուսին, աչոքդ անդուն,
Պահէ՛ Հայոց ոսկորներ.
Եւ Մայիսի զուարդ ցօղով
Յօղէ՛ անոնց շիրիմներ:

Արծուիք, բազէք Հայաստանին
Եւ արագիլ ամրան հիւր.
Դուք հսկեցէք այս աշխարհին,
Ժառանգեցէք Հայոց տուն:

Մոխիրներու վրայ նստէք,
Աւերակները չինէք բոյն,
Եւ ծիծեռնակ գայ ու երթայ
Մինչև հայոց գայ գարուն:



ԵՐԳ ՎԱՐԴԱՆԱՅ

Վարդան մեր քաջ զօրավար
Սուր ի ձերին ոսկեվառ.
Կանչում է իւր քաջերին
Ջարդել զգլուխ Կազիբաթին,
Ո՛հ, Վարդան, Վարդան, Վարդան:

Հայոց զօրքեր գունդագունդ
Ժողովում են կրրով թունթ
Մայրաքաղաքն Արտաշատ
Մայրաքաղաքն մարդաշատ:

Հայոց զօրքեր անհամար
Դրրօշակներով պայծառ,
Ամէն կողմից շտապատծ
Վազվրզեցին կատաղած:

Դեւոնդեաց խուճըը անմահ,
Անվախ, անդող և անահ,
Խաչը բռնած Գրիստոսեան
Բորբոքեցին զօրք Հայկեան:

Փառք և պարծանք յաղթական
Քեզ սերելի իմ Վարդան.
Որ քո սիրով բորբոքիչ
Հանդիսացար քաջ փրկիչ.
Դու և քո քաջ ընկերներ
Արիւճափար անվեհեր
Ջարդեցիք զօրք Պարսկական
Դրիք գետին անկենդան:

Վ Ա Ր Դ Ա Ն

Իմ հայրենեաց հոգիս Վարդան,
Հոգիս հոգւոյթ եղնի զուրպան,
Որ Տըզմուտի ափերի քով,
Վաթսուն հազար կտրիճներով,
Ջարկիր, զարկուար, ինկար՝ քաջ քաջ,
Պարսիկք սրփռած ի ձախդ ու յաջ:
Իմ հայրենեաց արեւ Վարդան,
Հոգիս հոգւոյդ եղնի զուրպան:

Աւետարան ու խաչն առիւր,
Տարիւր երկինք բարձրացուցիր.
Եւ դու ալ յետ թողիր գացիր,
Անուշ արեւդ հողին տուիր,
Որ հայրենեաց չողայ արեւ,
Շաւարչանայ դաշտին վերեւ:

Իմ հայրենեաց սրև Վարդան, և այլն:

Արևնդ կարմիր, կարմիր թափուաւ,
Գաշտն ու ծագիկ ներկուեցաւ.
Հուննակն ելաւ ամպի տակից,
Պաղ պաղ թափեց ցօղիկն յաչից.
Որ հայրենեաց վարդէր բաղուին,
Երբէ պլլպուշ գրախտի սարին:
Իմ հայրենեաց արև Վարդան, Լայկն:

Ս. Ն. ՅԵԼԷԿԵԱՆ

ՎԵՐՁԱԲԱՆ

Լըռեց: Անպերը եկան ծածկեցին
Երկինքն ու լուսինն աչքէս խրկեցին.
Մընացի մենակ՝ հօգիս վրդոված,
Չեաներըս ծոցիս, գլուխս քարշ արած:
Եւ այնուհետեւ ամեն կրկնուն
Մընում եմ լուսնի խաղաղ ծագելուն.
Նորս տըխրամած դէմքը նայելիս՝
Չիչում եմ թշուառ վիճակը ազգիս:
Մեխ, ցոլա՛, փայլէ՛, տխրադէմ լուսին,
Գուցէ քու փայլից փայլ տաս և Հային:
Պատմէ՛ շատերուն Վարդանի Մանր,
Կամ ինչպէս կորաւ Հայ ազգի դանը,
Կամ ինչ վե՛ն սիրով սիրում էր Վարդան,
Մայրենի հօղը,—անխարհն Հայաստան:

ԳԱՄՆՈՒ-ՔԱՔԻՊԱ



ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



ՄԻՆՁԵՒ ՅԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԾ ԳՈՐԾԵՐԸ

Թիւ 1.—Նախախնամութեան գաղտնիքը	1.—
» 2.—Կանթի Մարքիզուհին	1.50
» 3.—Դէպ 'ի Հայաստան	3.50
» 4.—Նօրմա	1.—
» 5.—Գրոց Բրոց . Գ. Էպոս . Սրուանձտեանց	5.—
» 6.—Սասունցի Դաւիթ	» 2.—
» 7.—Շուշանն Շաւարշանայ	» 3.—
» 8.—Հնոց և Նորոց	» 5.—
» 9.—Ազնիւ տղուն պատմութիւնը	» 3.—
» 10.—ՅՈՒՇՍՐՁԱՆ ՀԱՅՍՏԱՆԻ (Ա. Հատոր զէպի Բիսիկան)	

Այս գործը պրակ սու պրակ մօտ օրերս այս պիտի տեսնէ՝
 Հրատարակիչը՝ ինք սննձամբ ճամբորդած ըլլալով՝ տեղւոյն վրայ
 ուսումնասիրութիւններ ըրած է և մեծ գոհազուրկիւններով հաւա-
 րած է նիւթերը՝ Բոլոր պատկերները, որ պիտի երեւին գործին
 մէջ, ինք սննձամբ տեղւոյն վրայ լուսանկարել տուած է:

Վստահ ըլլալով որ այս խիստ շահեկան բնաշխարհի թան-
 կագին յուշարձանը, պիտի հետաքրքրէ ամէն Հայ սնհատ, ի մօտայ
 պիտի բռնանք բաժանադազրութիւն խիստ մտոյելի և սպասով
 պայմաններով:

ՀԱՍՅԷ՝

Գ Ր Ա Տ ՈՒ Ն « Ա Ր Ա Մ Ա Ձ Դ »

ՂԱՂԱԹԻՍ, Գուրե-Գարու քիւ 695, Կ. ՊՈԼԻՍ

« Ազգային գրադարան



NL0357807

56.161